№ 164 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

№ 164 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1

Ցայտարարում եմք ի գիտութիւն

«ԿԵԱՆՔԻ»

Բաժանորդներին, որ կառավարութիւնը դադարեցրել է մեր թերթի հրատարակութիւնը և խմբագիր-հրատարակիչ Բ. Իշխանեանին ենթարկել պատասխանատուութեան՝ «Զարդեղի անվերջ քաղաքականութիւնը Ռուսաստանում և Անդրկովկասում» (№ 13) և «Պետական Դումայի վիժումը» (№ 18) վերնագրով ապագնորդների պատճառով։

Մեր բաժանորդներին ինչ ձևով գոհացում տալու մասին կը յայտնենք մօտիկ ապագայում։

կարելի է խմբագրութիւնից ստանալ «Կեանքի» բոլոր համարները կամենալ № 1—18։

Խմբագրութիւն «Կեանքի»

առ. (ու. կ. և.) 3—5

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ելիզաւետպոլսկայա, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի. (ա.օ.) առ. 3—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխանի փոխարէն. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ. Մի կոչ արէշցի ուսումնարաններին. Ընտրութիւնների շուրջը. Մոսկուա եկեղեցու ընտրութիւնների առիթով. Խմբագիրը ընտրական պայքար է մղում մահկերով. Խոստում և գործ. Կրօնշտադում. Կոչ, կենտրօնական ժողովին. Յունիսի 7-ի կոնդակը. Մոռացված անկիւններ. Ներքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

III

Զէնքը չարիք է։
Զօրքը չարիք է։
Դրանք չարիքներ են, սակայն, զըժբաղդաբար, յաճախ անխուսափելի չարիքներ։

Հանգամանքները այնպէս դասաւորվեցին և անկարգ պայմանները այնպէս կուտակվեցին, որ հայ ժողովուրդը ստիպված զգաց այդ չարիքների օգնութեան դիմելու՝ թէ զէնք ձեռք բերելու և թէ ռազմիկներ պատրաստելու իր համար։

Մենք գուցէ ամենավերջիններից մէկն ենք, որ գործ ունենք այդ չարիքների հետ։ Նայեցէք ամեն տեղ, նրանք թագաւորում են ամենուրեք։

Արդարև այդ չարիքները կան թէ միապետական Զինաստանում, Պարսկաստանում և Թուրքիայում, թէ սահմանադրական Գերմանիայում, Իտալիայում, Աւստրիայում և թէ հանրապետական Ֆրանսիայում, Շվէյցարիայում և Միացեալ-Նահանգներում։

Ամբողջ լուսաւոր մարդկութիւնը բողոքում է զէնքի և զօրքի դէմ, բայց նա ստիպված է հաշվել նրանց գոյութեան հետ, որովհետև նրանք գործնական անխուսափելի անհրաժեշտութիւն են, ժողովուրդների ազատութեան գրաւական։

Զէնքի և զօրքի դէմ բողոքելու համար ամբողջ հասարակական հոսանքներ են կազմվել Եւրօպայում։ Հապայի կօնֆերենցիայի գլխաւոր նպատակներից մէկը՝ զէնքի և զօրքի գործադրութեան սահմանափակումն է։ Խաղաղասիրական մի շարք հաստատութիւններ զբաղված են այդ քարոզներով, թէ զէնքը և զօրքը պէտք է ոչնչացվեն կամ կարելին չափ նուազագոյն աստիճանի հասցնվեն։

Բայց լուսաւոր աշխարհը իր այդ լաւագոյն ձիգերի մէջ դեռ աջողութիւն չունի։ Զէնքը և զօրքը չեն ոչնչացված, չեն ոչնչացվում, և ինչպէս երևում է, դեռ երկար միջոց կանգած կը լինեն հասարակութեան ուսերին, իբրև բարոյական մի ծանրութիւն, իբրև նիւթական մի ճնշող բեռ։

Մեզ ևս մեր փոքրիկ շրջանում վիճակվեց հարկ տալ ռազմականութեան, մենք ևս ստիպված ենք զէնքի և զինուորութեան մասին մտածելու։

Եւ ներկայումս մենք ունենք և զէնք և զինուորներ։

Դա իրականութիւն է։

Մեր զէնքը և զինուորը ինքնապաշտպանութեան, կամ ժողովրդի ֆիզիկական ապահովութեան համար են։

Դա է նրանց պաշտօնը և նպատակը։

Դրանից դուրս այլ ևս ոչ մի դեր և կոչում։

Այդ պէտք է լաւ յիշել և ուշադրութեան առնել։

Մի ուրիշ անգամ մենք կը յայտնենք մեր կարծիքը ինքնապաշտպանութեան գործի բարեփոխութեան մասին։

Մենք գիտենք, որ կան պետութիւններ, որոնք զէնքը և զօրքը գործ են դնում յաճախ ոչ միայն արտաքին, այլ և ներքին թշնամու դէմ, բայց դա այն տիպի և բռնութիւնների մէկն է, որոնց դէմ բողոքել է և բողոքում է հասարակութեան լաւագոյն և առաջադէմ մասը։

Ինքը զօրքը իր լաւագոյն ներկայացուցիչների բերանով յայտնել է, երբ հնարաւորութիւն է ունեցել, ասելով.

—Մենք չենք գնալ ներքին թշնամիների դէմ. մեր զէնքը արտաքին թշնամիների համար է։

Զէնքը և զօրքը չը պէտք է խանվեն քաղաքացիների հասարակական և քաղաքական վէճերի, մաքառումների և պայքարների մէջ. նրանք չը պէտք է ոչ մի ճնշում գործ դնեն հասարակական հոսանքների, ընտրողական գործերի, զանազան տեսակ քաղաքական համախմբումների վրա։

Դա հիմնական պահանջ է։ Դա մի այնպիսի պահանջ է, որ իւրաքանչիւր ազնիւ և ազատասէր ժողովուրդ գընում է իր ռազմական կազմակերպութիւնների առաջ։

—Զինուորի համար չը կան և չը պէտք է լինեն ներքին թշնամիներ։

Ոչ, ոչ և ոչ։

Ուրեմն դա պարզ է և վճռված։

Այժմ հարց ենք դնում մեր հասարակութեան առաջ, մի պարզ և կորուկ հարց՝

—Արդեօք հայ զինուորի համար կարող են լինել ներքին թշնամիներ։ Արդեօք նա կարող է իր զէնքով հանդէս գալ այն մարդկանց դէմ, որոնք ուրիշ դաւանանք և հայեացքներ ունեն հասարակական հարցերի և գործերի վրա։ Արդեօք նա կարող է բռնանալ մէկի վրա և ստիպել, որ մարդիկ համակերպվեն զինուորի ցուցումներին։

Բաւական է հարցերը այսպէս դնել, որպէս զի պարզ լինի, թէ ինչ պատասխան պէտք է նրանք տան։

Պատասխանը որոշ է և կտրուկ՝

Ոչ, ոչ և ոչ։

Այն օրից, որ զինուորը սկսում է ոբոնել և հալածել ներքին թշնամիներին, նա ինքն է դառնում վտանգաւոր ներքին թշնամի։

Սա էլ պարզ է և անկասկած։

Մենք ամեն երախտագիտութեամբ և հիացմունքով դրուատելով ինքնապաշտպանական զինուորների պաշտելի անձնուիրութիւնը և յաւերժական հերոսութիւնները՝ պատրաստ ենք մեծարել նրանց և ամեն պատուի արժանացնել։ բայց եթէ նրանք կը սկսեն իբրև զինուորներ մէջտեղ մտնել մեր հասարակական գործերին, ճնշումներ գործ դնել ընտրութիւնների և հասարակական գործունէութեան ուրիշ արտայայտութիւնների վրա, այն ժամանակ մենք նրանց կը կանգնեցնենք։

—Ոչ, եղբայրներ,—կասենք նրանց,—քաղաքացին ազատ պէտք է լինի իր հայեացքների, իր գործավարութեան, իր քաղաքական վարմունքների մէջ։ Դուք այստեղ իբրև ռազմիկ այժը գործ չունէք անելու, իսկ եթէ մտադիր էք իբրև քաղաքացիներ հանդէս գալու, մոռացէք ձեր ռազմիկ լինելը և դէնը դրէք ձեր հրամանները և ձեր սպառնալիքները։

Այս է պահանջում հասարակական արդարութիւնը, այս է պահանջում առողջ լոգիկան, այս է պահանջում ազգերի քաղաքական փորձը։

Եւ այս է, որ մենք ստիպված ենք կրկնել «Ալիքի» զեկավարների հակացնելու համար մեր որդի, բայց նրանց համար անողով թուացող տեսակէտը։

Եթէ դուք ազատասէր, առաջադէմ, արմատական գործողներ էք, մի գործադրէք զինուորների ներգործական այժը հասարակական գործերի վճռանատութեան մէջ, մի դիմէք գործելու այն եղանակին, որը յատուկ է յետադիմական գործողներին։

Այդ մէկ։

Իսկ երկրորդ՝ քաջութիւն ունեցէք դատապարտելու և բարոյական ձեր պարտականքը յայտնելու ռազմական այն գործողներին, որոնք թոյլ են տալիս իրանց կատարել զեղծումներ և չարագործութիւններ։

Ձեր այդպիսի դատապարտութեամբ դուք թէ պատած կը լինէք մեղապարտին, թէ զգաստացրած կը լինէք նրա ընկերներին և թէ կարողութիւն տուած կը լինէք, որ ժողովրդի բողոքի և գանգատի ձայները հասնեն ձեր ականջին։

Ձեզ յիշեցնենք մի օրինակ։ Մի հինգ վեց տարի սրանից առաջ «Մշակի» էջերում երևացին Պարսկաստանից մի շարք թղթակցութիւններ այնտեղի ենիչերիների գործունէութեան մասին։

Ովքեր էին ենիչերիները։

Քաղաքական կազմակերպութիւններին պատկանող անձեր, որոնք սկսել էին ի չարը գործ դնել իրանց հեղինակութիւնը և ֆիզիկական այժը նեղ, անձնական ստոր նպատակների համար։ Ժողովուրդը անուանեց նրանց ենիչերիներ։

Երևոյթը քամեցրեցին և վրդովեցնող էր։ Եւ չէր կարելի նրան թագցնել։

Մեր լրագրերը չը լռեց և հասարակական ալարը երևան հանեց։

Ձեր ներկայ աշխատակիցներից մէկը, որ այն ժամանակ «Մշակի» աշխատակիցը էր, Տիգրան Յովհաննիսեան, գրեց մի յատուկ յօդուած ենիչերիների գործունէութեան դէմ և ասաց ծանր խօսքեր։

Եւ «Մշակը» իր բռնած դիրքով, իր թղթակցութիւններով և Տ. Յ.-ի յօդուածով մի լաւ գործ կատարեց իր ժամանակին, որ սթափեցնող ազդեցութիւն ունեցաւ Պարսկաստանի իրականութեան վրա և զսպեց այնտեղ ստեղծված կամայականութիւնները։

Անցաւ ժամանակ, պարզվեցին նոր երևոյթներ։ Պարզվեց, որ ենիչերիներ կան նաև Անդրկովկասում։ Նրանց մասին գանգատներ լսվում են զանազան տեղերից։

Այո, նրանք գոյութիւն ունեն. այդ չէ կարելի ժխտել։ Այդ պէտք է ընդունել և ամեն ջանք գործ դնել նրանց հեռացնելու ու զսպելու թէ գործի մաքրութեան համար և թէ հէնց նրա համար, որ ենիչերիների պատճառով չը մրոտվի և վարկաբեկ չը լինի նաև բազմաթիւ ազնիւ, անձնուէր, ոգեորված և մաքուր գործողների պատիւը։

Ինչու՞ մէկ վատի պատճառով անուանարկվի հարիւր լաւը. ինչու՞ այդ վատը արմատախիլ չանվի, որպէս զի բոլորը մաքուր լինեն։

Իսկ եթէ դուք կուզենաք բացասել սէր ու դատապարտելին, ամեն բան սպիտակ հրատարակել և ամեն մի արդարացի ու ճշմարիտ ցուցում անուանել զրպարտութիւն ու թշնամութեան արտայայտութիւն, այն ժամանակ ինչով դուք կը զանազանվէք այն ըէակցիօնական գործողներից, որոնց վերաբերութեամբ աշխատում էք ձեր փքուն և շինծու դարձուածներով այնքան վրդովմունք արտայայտել։

Մի՞թէ այս բոլորին դուք պէտք է պատասխանէք ծամածռութիւններով խմբագրական ժպիտների մասին և անձնական ակնարկներով զբաղվէք։

Ժամանակ է սթափվելու։

Երևոյթները չափազանց լուրջ են։ Հասարակութիւնը հարամաշ եղաւ իր արդար գայրոյթը զսպելուց։

Մեր առաջ հասարակական ցաւոտ խոցեր են դրված։

Իսկ դուք անձնական վրիժառական անարժան ձևերից դէնը չէք կարողանում քաշել և ձեր խայտառակութեան նորանոր ելևէջներն էք միայն հանդէս գնում սրամտած հասարակութեան առաջ։

Ողջալի է։ Սոսկալի է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 31 յուլիսի

Այստեղի թուրք ներկայացուցիչները դիմել էին Բագու Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիեվին համոզելով, որ անհրաժեշտ է մի յատուկ յանձնաժողով գալուստը Բագուից հաշտութիւնը ամրացնելու նպատակով։

Թաղիեվից ստացվեց պատասխան, որով նա յայտնում է իր ուրախութիւնը հաշտութեան համար և յորդորում է իր կողմից էլ ամուր պահելու նրան, բայց յատուկ պատգամաւորութեան գալը նա անհարիր է համարում, քանի որ գեներալ Գօլոշչապովը Շուշուն է, և յոյս է յայտնում, որ քննութիւն կը լինի և քննութեան ժամանակ գեներալը յետ կը կանչվի։

Պարսկաստանի սահմանադրութիւնը

Կրակի, յուլիսի 30-ին պարսից ընդհանուր հիւպատոս Միրզա Մահմուդ-խան Մուֆախամ Սուլթանը հրաւիրելով իր մօտ թէլի Թիֆլիսում բնակվող պարսկահպատակներին յայտնեց նրանց պարսից դեսպանատից ըստացված հետևեալ հեռագիրը։

«Նորին Կայսերական Մեծութիւն Պարսից Շահը իր հպատակների դրութիւնը և կենցաղը բարւոքելու համար բարեհաճեց շնորհել իրաւունք՝ հաստատելու «Արդարութեան Տուն» (Պետական Դումա) ամբողջ երկրի համար և գումարել ներկայացուցիչների ժողով բոլոր դասակարգերից՝ բարձր իշխաններից, հոգևորականութիւնից, վաճառականներից, արհեստաւորներից և ուրիշներից, որպէս զի քննելով և սահմանելով պարտաւորաշաճ օրէնքներ, ժողովրդական կառավարութեան բոլոր մասերի և երկրի կարիքների գոհացման համար՝ ներկայացնեն իրանց որոշումները սադրազամի միջոցով Նորին Կայսերական Մեծութեան ի հաստատութիւն և ի գործադրութիւն։

«Այժմ ամբողջ Պարսկաստանում տեղի են ունենում մեծ ուսումնասիրութիւններ և լուսաւորութիւններ կայսերական այդ մեծ շնորհի համար»։

Ղազախ, 30 յուլիսի

Ղազախի Շամշադին գաւառամասի Թաթլու գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Զիթչենցը այսօր չորրորդ օրն է, ինչ անհետացել է. նրան որոնում են՝ չեն գտնում, ասում են իբր նա գնացած է եղել կորած թէ գողացված մի քանի եղների համար թուրք գիւղերը և ճիշտ տեղեկութիւն քաղելու Հասանսու գիւղի մարդկանցից, որ իբր սրանք էլ իրանց կողմից վարձ տան Գեօղչալու գնալու և այնտեղից հանելու կորած եղները։ Մինչև այժմ քահանայի ուր լինելը ոչ ոք չը գիտէ, որի մասին հեռագրվել է պ. գաւառապետին։ Լուրեր են պտտվում իբր սպանել են։ Եղակի սպանութիւնների հետևանքը կարող է վատանալ։

—

Թէհրան, 30 յուլիսի

Վերջին ժամանակներս անգլիական դեսպանատունը 15,000 ապաստանածներից այժմ, որովհետև հոգևորականութիւնը վերադառնում է Ղումից, մնացել են մօտ մի հարիւր աւելի յամառ անձինք. մնացածները յօժարակամ հեռացել են ապաստարանից։ Շուտվան և խանութները բաց են։ Թէհրանը սովորական տեսքն է ընդունում։ Կառավարութիւնը զբաղված է բարենորոգումների մշակմամբ։ Ուղղի վերջին խմբագրութեան մէջ խորհրդակցական խորհուրդը կոչված է «ժողովրդական ժողով»։

(Հեռ. Գործ.)

—

Կ. Պոլիս, 29 յուլիսի

Սուլթանի առողջութիւնը դէպի լաւն է գնում։ Նա գտնվում է լիակատար գիտակցութեան մէջ և ստորագրում է ուկազները։ Նա ստանվում է երիկամունքների հիւանդութիւնով։ — Քաղաքում հանդիստ է։

(Հեռ. Գոր.)

—

Կ. Պոլիս, 29 յուլիսի

Սուլթանի հիւանդութեան մասին կասկած չէ կարող լինել։ Հեռագրով կանչված է պրոֆէսսոր Բերմանը։

(Հեռ. Գործ.)

—

Կ. Պոլիս, 30 յուլիսի

Ելդրզ-Քիօշկում արած հարցապնդման դիպլոմատիական հաստատութեան գլխաւորին պատասխան է տրված, որ սուլթանի հիւանդութիւնը մրսելու հետևանք է։ Նրա դրութիւնը վտանգ չէ սպառնում և սուլթանը զբաղվում է պետական գործերով։

(Հեռ. Գործ.)

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Մոսկվան յուլիսի 24-ին առաւօտեանից խօսում էր, որ ժամի 12-ին ընդհանուր քաղաքական գործադուլ է սկսվելու, բայց, քաղաքի տրամադրութիւնը ի նկատի առնելով, բոլորովին չէր կարելի հաւատալ այդ լուրերին։ Թէև, ճշմարիտ է, նախորդ օրը բանուորների պրոֆեսսիոնալ ժողովներում ամեն տեղ էլ քննվել էր գործադուլի հարցը, բայց և այնպէս նա ընդունվել էր ձայների աննշան մեծամասնութեամբ։ Գործադուլ անելու կոչ էին անում գլխաւորապէս բանուոր դասակարգին զեկավարող սօցիալ-դեմօկրատները, Սվէռբօրգի, Կրասնոյարսկի և Պետերբուրգի անդամների վրա ազդելու նպատակով։ Ամենից աւելի համերաշխ կերպով գործադուլ արին տպարաններում։ Նախ գործադուլ արեց Կուշներեովի տպարանը, ուր բանում են 700 բանուորներ։ Յերեկվայ ժամի 12-ին գործադուլ արեց տպարանների մեծ մասը։ Ժամի 1-ին պատգամաւորների ժողով հրաւիրվեց, ուր քննվեց գործադուլը վերացնելու հարցը նոյն օրը։ Կէսօրից յետոյ տպարանների գործադուլին միացան գործարաններից ու ֆաբրիկներից շատերը, մաքսատան պահեստների և պետական գինու խանութների բանուորները։ Մի քանի տեղերում բանուորները, չը ցանկանալով գործադուլ անել, վանդում էին ագիտատորներին և շարունակում էին աշխատանքները։ Դուբրովկի և Նաբգօլցի չուգունի ձուլարանի բանուորները հաւաքվելով ուզում էին վերսկսել աշխատանքները, բայց նրանց մօտեցաւ մի ագիտատոր, կարմիր գրօշակ պարզեց ու կոչ արեց բանուորներին միանալ արդէն բազմաթիւ գործարաններում ու ֆաբրիկներում սկսված գործադուլին։ Ագիտատորի ճառը ներգործեց, և բանուորները վճռեցին գործադուլ անել։ Ահագին ամբոխը, թւով 1500 հոգի, կարմիր գրօշակներով ու Մարսելիեզ երգելով փողոց դուրս եկաւ, ուր նրան դիմաւորից զօրեղ պահակախումբը ժանդարմներից ու ոստիկաններից բաղկացած, որոնք մտրակների այժով ցրեցին ամբոխին։ Միևնոյն օրը գործադուլ արին երկաթուղային արհեստանոցների բանուորները, որոնց հետ միացան դեպօի մի քանի փականագործներ։ Բանուորները միխնդներ էին կազմում, որոնց ցրում էին ոստիկանները զօրքերի օգնութեամբ։ Պատգամաւորներ էին գնացել աշխատանքները կանգնեցնելու քաղաքային հասարակական գործերում, բայց բանուորները կարական կերպով մերժել են գործադուլ անել և շարունակել են իրանց աշխատանքները։ Սկսված գործադուլի պատճառով քաղաքային վարչութիւնը վճռել է յայտնել քաղաքային բանուորներին, որ գործադուլների ժամանակ նա չէ կարող թոյլ տալ ժողովներ քաղաքային շինութիւնների մէջ։ Գործադուլների օրերի համար ծառայողներին և բանուորներին առձիկ չէ կարող տալ, և այն ձեռնարկութիւնների մէջ, ուր արդէն գործադուլները սկսվել են, բոլոր բանուորներն ու ծառայողները կը համարվեն արձակված, եթէ որ յաջորդ օրվանից աշխատանքները չեն վերսկսիլ։ Քաղաքի կենտրօնում ներում լուրջ անկարգութիւններ տեղի չեն ունեցել։ Ամեն տեղ ոստիկանական պահակները սաստկացված են եղել։ Զապասների և գործարանների մօտ պահակներ են նշանակված։ Քաղաքի արուարձաններում և գործարանային շրջաններում և Մոսկվա գետի միւս ափում շարունակ շրջում են պահակները։ Հսկողութիւնը ամեն տեղ էլ կըրկնապատկված է։

—Յուլիսի 24-ին, Մոսկվայի քաղաքապետը ուղարկել է բոլոր ոստիկանմասերին հետևեալ հեռագիրը. «Առաջարկում եմ յայտնել բոլոր ապրանական բանուորներին, որ եթէ նրանք, համաձայն գործադուլ անող կոմիտէի որոշման, թողնելու լինեն ժամի 12-ին աշխատանքները, այն ժամանակ նրանց բոլորին կը կալանաւորեմ, կը բանտարկեմ և կաքսորեմ իրանց ծննդավայրերը։ Յայտարարում եմ բոլոր քաղաքապետներին և ոստիկանական պաշտօնեաներին, որ ագիտատորներին և զրդիչներին կալանաւորելու համար նրանցից իւրաքանչիւրը տողատեղին 10 կօպէկ։

—Յուլիսի 22-ին, երեկոյեան, Մոսկվա-Եարոսլավլ-Արխանգելսկի երկաթուղու Շչելկովօ կայարանին մօտիկ վեց գինված չարագործներ յարձակում են գործել կայարանից գնացող ճանապարհորդների վրա։ Ժանդարմերիական ոստիկանները շտապեցին դէպքի վայրը և հետամուտ եղան չարագործներին։ Երկար հրացանաձգութիւնից յետոյ, չարագործները յետ նահանջեցին և թաքնվեցին անտառում։ Մութը ընկնելու և փամփուշտները վերջանալու պատճառով, ոստիկանները այլևս հետամուտ չեղան։ Հրացանաձգութեան ժամանակ ոչ ոք չէ վնասվել։

—Յուլիսի 23-ին, երեկոյեան ժամի 9-ին, Մոսկվայից երկու վերստ հեռու, Մեշչերսկի գործարանին մօտիկ անյայտ չարագործների մի խումբ հրացանաձգութեան ենթարկեց երկաթուղու մարդատար գնացքը։ Վնասվել են լուսամասները։ Զոհվածներ չը կան։ Զարագործները օգուտ քաղելով մթութիւնից անյայտացան։ Անկարելի եղաւ պարզել, թէ ովքե՞ր են կրակել։

ՄԻ ԿՈՉ

Արեւելքի ուսումնասէր պարոններին

Դուք Արէշում ծնված իրաւաբաններ, հեմարանաւարտ և դիպլոմաւորտ ուսուցիչներ, պետական պաշտօնեաներ և զրպէտ պարոններ, որ Կովկասի զանազան քաղաքներում ձեր բախտի շուրջն էք պտտում, դուք, որ Արէշի օդով ու ջրով սնված, նրա հարազատ զաւակներն էք, ձեր ծննդավայրի այրված դիրքերի, ամայացած ու խոպան մնացած դաշտերի, ձեր թշուառացած ապաստան եղբայրների ապագայով չէ՞ք հետաքրքրվում։

Ձեր հարազատակիցները վշտերի անհուն, ալիքաբաղդ ծովի փրփուն եզերին կանգնած, մունջ-մունջ գլխակոր նայում են վշտի մութ ալիքներին։ Կարեկցութիւն չէ՞ շարժում ձեր բաւականութիւնների այդ տարտամ դրութիւնը, դէթ բոպէների մտախոհութեան տեղիք չէ՞ տալիս, մի չոր հառաչով անգամ չէ՞ զգաստացնում նրանց։

Այն չոր հացի կաթսա, մի փոր տաք կերակրի հոտով մղկտացող գիւղացու տանը դուք չէ՞ք պատահել, նրա պարզասիրտ սեղանին մասնակից չէ՞ք եղել։ կոպէկ կորզելու համար այն կարկաւոյ ձեռքը դուք ամենևին չէ՞ք սղմել, բարևներ չէ՞ք արել։ արդեօք միանգամայն նսեմացել, միանգամայն անհետ ջնջվել է ձեր յիշողութիւնից և չէ՞ք մտաբերում գէթ մի քանի քաղցր, ուրախ մտապատկերներ, որոնց շնորհիւ դիմէիք Արէշ, ակնատես լինէիք նրա խեղճ դրութեանը, նրա կրակէ շապկին, կարեկցաբար բռնէիք նրա ձեռքի՝, նրա տխրամած աչքերին նայելով՝ նաև վերստակից և ապա խորհրդակից ընկեր լինէիք։

Ձեռից գնում է ձեր ծննդավայրը, նրա այնքան քաղցր նահապետական վարք ու բարքը։ կորցնելով տուն տեղ, հարատութիւն, նա այս րոպէին կանգած է անպատութեան շեմքին. մի քայլ.... մի քայլ ևս, և նա կը գլորի անպատութեան անեղը ծովի մէջ, և վճռեցին գործադուլ անել։ Ահագին ամբոխը, թւով 1500 հոգի, կարմիր գրօշակներով ու Մարսելիեզ երգելով փողոց դուրս եկաւ, ուր նրան դիմաւորից զօրեղ պահակախումբը ժանդարմներից ու ոստիկաններից բաղկացած, որոնք մտրակների այժով ցրեցին ամբոխին։ Միևնոյն օրը գործադուլ արին երկաթուղային արհեստանոցների բանուորները, որոնց հետ միացան դեպօի մի քանի փականագործներ։ Բանուորները միխնդներ էին կազմում, որոնց ցրում էին ոստիկանները զօրքերի օգնութեամբ։ Պատգամաւորներ էին գնացել աշխատանքները կանգնեցնելու քաղաքային հասարակական գործերում, բայց բանուորները կարական կերպով մերժել են գործադուլ անել և շարունակել են իրանց աշխատանքները։ Սկսված գործադուլի պատճառով քաղաքային վարչութիւնը վճռել է յայտնել քաղաքային բանուորներին, որ գործադուլների ժամանակ նա չէ կարող թոյլ տալ ժողովներ քաղաքային շինութիւնների մէջ։ Գործադուլների օրերի համար ծառայողներին և բանուորներին առձիկ չէ կարող տալ, և այն ձեռնարկութիւնների մէջ, ուր արդէն գործադուլները սկսվել են, բոլոր բանուորներն ու ծառայողները կը համարվեն արձակված, եթէ որ յաջորդ օրվանից աշխատանքները չեն վերսկսիլ։ Քաղաքի կենտրօնում ներում լուրջ անկարգութիւններ տեղի չեն ունեցել։ Ամեն տեղ ոստիկանական պահակները սաստկացված են եղել։ Զապասների և գործարանների մօտ պահակներ են նշանակված։ Քաղաքի արուարձաններում և գործարանային շրջաններում և Մոսկվա գետի միւս ափում շարունակ շրջում են պահակները։ Հսկողութիւնը ամեն տեղ էլ կըրկնապատկված է։

—Յուլիսի 24-ին, Մոսկվայի քաղաքապետը ուղարկել է բոլոր ոստիկանմասերին հետևեալ հեռագիրը. «Առաջարկում եմ յայտնել բոլոր ապրանական բանուորներին, որ եթէ նրանք, համաձայն գործադուլ անող կոմիտէի որոշման, թողնելու լինեն ժամի 12-ին աշխատանքները, այն ժամանակ նրանց բոլորին կը կալանաւորեմ, կը բանտարկեմ և կաքսորեմ իրանց ծննդավայրերը։ Յայտարարում եմ բոլոր քաղաքապետներին և ոստիկանական պաշտօնեաներին, որ ագիտատորներին և զրդիչներին կալանաւորելու համար նրանցից իւրաքանչիւրը տողատեղին 10 կօպէկ։

—Յուլիսի 22-ին, երեկոյեան, Մոսկվա-Եարոսլավլ-Արխանգելսկի երկաթուղու Շչելկովօ կայարանին մօտիկ վեց գինված չարագործներ յարձակում են գործել կայարանից գնացող ճանապարհորդների վրա։ Ժանդարմերիական ոստիկանները շտապեցին դէպքի վայրը և հետամուտ եղան չարագործներին։ Երկար հրացանաձգութիւնից յետոյ, չարագործները յետ նահանջեցին և թաքնվեցին անտառում։ Մութը ընկնելու և փամփուշտները վերջանալու պատճառով, ոստիկանները այլևս հետամուտ չեղան։ Հրացանաձգութեան ժամանակ ոչ ոք չէ վնասվել։

—Յուլիսի 23-ին, երեկոյեան ժամի 9-ին, Մոսկվայից երկու վերստ հեռու, Մեշչերսկի գործարանին մօտիկ անյայտ չարագործների մի խումբ հրացանաձգութեան ենթարկեց երկաթուղու մարդատար գնացքը։ Վնասվել են լուսամասները։ Զոհվածներ չը կան։ Զարագործները օգուտ քաղելով մթութիւնից անյայտացան։ Անկարելի եղաւ պարզել, թէ ովքե՞ր են կրակել։

ՄԻ ԿՈՉ

Արեւելքի ուսումնասէր պարոններին

Դուք Արէշում ծնված իրաւաբաններ, հեմարանաւարտ և դիպլոմաւորտ ուսուցիչներ, պետական պաշտօնեաներ և զրպէտ պարոններ, որ Կովկասի զանազան քաղաքներում ձեր բախտի շուրջն էք պտտում, դուք, որ Արէշի օդով ու ջրով սնված, նրա հարազատ զաւակներն էք, ձեր ծննդավայրի այրված դիրքերի, ամայացած ու խոպան մնացած դաշտերի, ձեր թշուառացած ապաստան եղբայրների ապագայով չէ՞ք հետաքրքրվում։

Ձեր հարազատակիցները վշտերի անհուն, ալիքաբաղդ ծովի փրփուն եզերին կանգնած, մունջ-մունջ գլխակոր նայում են վշտի մութ ալիքներին։ Կարեկցութիւն չէ՞ շարժում ձեր բաւականութիւնների այդ տարտամ դրութիւնը, դէթ բոպէների մտախոհութեան տեղիք չէ՞ տալիս, մի չոր հառաչով անգամ չէ՞ զգաստացնում նրանց։

Այն չոր հացի կաթսա, մի փոր տաք կերակրի հոտով մղկտացող գիւղացու տանը դուք չէ՞ք պատահել, նրա պարզասիրտ սեղանին մասնակից չէ՞ք եղել։ կոպէկ կորզելու համար այն կարկաւոյ ձեռքը դուք ամենևին չէ՞ք սղմել, բարևներ չէ՞ք արել։ արդեօք միանգամայն նսեմացել, միանգամայն անհետ ջնջվել է ձեր յիշողութիւնից և չէ՞ք մտաբերում գէթ մի քանի քաղցր, ուրախ մտապատկերներ, որոնց շնորհիւ դիմէիք Արէշ, ակնատես լինէիք նրա խեղճ դրութեանը, նրա կրակէ շապկին, կարեկցաբար բռնէիք նրա ձեռքի՝, նրա տխրամած աչքերին նայելով՝ նաև վերստակից և ապա խորհրդակից ընկեր լինէիք։

Ձեռից գնում է ձեր ծննդավայրը, նրա այնքան քաղցր նահապետական վարք ու բարքը։ կորցնելով տուն տեղ, հարատութիւն, նա այս րոպէին կանգած է անպատութեան շեմքին. մի քայլ.... մի քայլ ևս, և նա կը գլորի անպատութեան անեղը ծովի մէջ, և

մէջ տան և հինգ կուսակցութեան բաժանված, մէկ մէկու սատծներին չը հաւանելով ոչինչ չեն անում։

Սոյն տողերով դիմելով ձեզ, իմ յարգելի հայրենակից եղբայրներ, ձեր ուշադրութիւնն եմ դարձնում ձեր եղբայրակիցների տարտամ, անորոշ, անվճռական դրութեան վրա։ Արդեօք տեղը չէ՞, որ դուք, Արէշի ուսումնասէր զաւակներդ, հոգաք մի ժողով գումարելու կամ Թիֆլիս կամ Բագու կամ Արէշ և կամ ուր և յարմար կը դատէք, այդ ժողովին հրաւիրելով մանակցել տաք արէշցի բոլոր գրագէտներին, նմանապէս և կանչէք Արէշի գիւղերից խելքը գլխին մի քանի անձինք և վերջնականապէս մի վճիռ դնէք—եթէ իրանց հողի վրա մնալը բարւոք է, համաձայնեցնէք և բոլորին միացնէք, եթէ ոչ, դուք առաւել ձեռնհաս էք դատելու նոր հող, հոգալու այդ մասին. միով բանիւ այդ կենսական հարցը լուծելու ժամանակը անցնում է։

Որ գաղթելը լաւ բան չէ, մեզ ամենիս յայտնի է, բայց դուք արէշցի լինելով ականատես էք եղել ձեր հայրենակիցների կրած զըրկանքներին, թուրքերով շրջապատված այդ մի խումբ հայերի տխուր, շատ տխուր, աննախանձելի օրերին։

Առանձին շնորհակալութիւն պարոն Գ. Սարգսեանցին, որը նամակով իր պատրաստակամութիւնն է յայտնում ամենայն կերպ աջակցելու արէշցիների վիճակը բարւոքելու հարցում, սակայն մէկը քիչ է, և ես, դիմելով ձեր հաւաքական ոյժի օգնութեան, կատարեալ յոյս ունիմ, հաւատացած եմ, որ ձեզ կաջողվի արէշցիների ապագայի հարցի լուծումը, եթէ կամենաք ձեր ժամերից զոհողութիւններ անել և որոշ չափով նեղութիւններ յանձն առնել։

Սահակ քահ. Տէր-Պողոսեանց

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Նուխուց հեռագրում են մեր խմբագրութեան, յուլիսի 30-ին, կիրակի.

Այսօր պատուիրակների ժողովը միաձայն ընտրեց պ. Հ. Առաքելեանին պատգամաւոր Նուխու Էջմիածնի կենտրօնական ժողովի համար։ Նախագահ ժողովի՝ Արշակ քահանայ Ֆրալչեան։

—

Վերին-Ագուլիս, յուլիսի 25-ին

Ամսոյս 17-ին տեղի ունեցաւ պատուիրակների ընտրութիւնը ուսումնարանի սրահում։

Մի ինքնակոչ պարոն ընտրութիւններից առաջ հասարակութեանը հրահանգում է Դաշնակցութեան մի թռուցիկով, որ սացվել էր Երևանից՝ Էջմիածնում գումարվելիք ժողովի առիթով։

Պարոնը միևնոյն թռուցիկը մի օր առաջ էլ կարդում է եկեղեցում, հայրապետական վերջին կոնդակների ընթերցումից ամենայնպէս յետոյ, երևի՝ իբրև բացատրութիւն այդ կոնդակների։

N.

—

Ախալքալաք, յուլիսի 25-ին

Յուլիսի 23-ին կայացաւ գաւառի

«Արջ օրհասական հզօրագոյնս մարանչի ի սատակէն իւր»

Այդ որոշումներից յետոյ ժողովը անցաւ ընտրութիւններին։ Նկատւում էր երկու ուժեղ հոսանքներ—մէկը Դաշնակցութեան, միւսը բողոքող գիւղացիութեան, որը այս անգամին չէր ուզում կուլ գնալ քաղաքիս ազգային ոստիկան զեկավարներին։ Եւ նա, գիւղացիութիւնը, հաստատ էր իր որոշման մէջ, բարձրացնելով ամէն մի ճնշող միջոցի և ակնարկի դէմ իր բողոքող ձայնը։

Պատգամաւորներից մի քանիսը երբ նկատեցին, որ մի նոր նկար, որ իր արտաքին տեսքով և մտածողութեան եղանակով Թիֆլիսի Թամամշեվի քարվանսարայի «չկախշկիների» տպաւորութիւնն էր թողնում, աշխատելով կողմնակի կերպով, իր անմիտ, ճռռոմարան ճառերով ժողովը երկարացնել և ընտրութիւնները յետաձգել,—առաջարկեցին, որ կողմնակի մարդիկ փայլէին իրանց բացակայութեամբ, և «դուրս» «դուրս» ազգակների տարափի տակ ուեւերդ ժողովականները թողին գահիճը պատգամաւորներին, որ նրանք ազատ, առանց մի որևէ ճնշման կատարեն ընտրութիւնները, չը նայած այն բանին, որ յիշեալ պարոնը «իրան որակից» ժողովրդի շահերի պաշտպան խօսքերով և մեծ զայրոյթով թողից իր տեղը պատգամաւորներին։ Բայց ով էր ուշադրութիւն դարձնողը. անցել էր կեղծ ու պատիր խօսքերի շրջանը։

Աւաղ փառաց անցաւորիս։

Ղազալի էին և պ. պ. Վ. Քալաշեանին և Ա. Դիլանեանը, որոնք իրանց զուլկացած դէմքերով մերթ այս կողմն էին նայում, մերթ այն և աշխատում էին իրանց հռետորական ճառերով գիւղացիութեան սիրայ նուաճել. նրանք խոստացան «բոլ-բոլ» հող (ում հողը ում են տալիս ձրի) և «ամերիկական սիստեմով» «բոլ-բոլ» ուսում ու գիտութիւն գիւղացիութեան և այլն և այլն, բայց գիւղացիների սրտերը զարձել էին մի ժայռ ապառաժ, ուր դիպչելով խորտակվում էր տեղիս դաշնակցականների երկար գիշերների անդուլ աշխատանքը, արժանանալով ժողովրդի խոր արհամարհանքին և մահաշունչ հեգնանքին։ Փոխվել էր ժամանակը, և նրանք զգալով այդ խեղճացել էին ինչպես երեխաներ, որ իրանք գիւղացիութեան ոչինչ չեն տուել, բացի ճնշումից ու բռնութիւնից։ Եւ երբեվայ հրաշալակը, տարուկը, որը մի մասի շարժումով պատրաստ էր իր կնոջը զոհելու, գաբձել էր մի ըմբոստ, իր գլխին մի պատուհաս։

Անիրը շուռ էր եկել...

Երկու կողմն էլ ունէին իրանց թեկնածուները։ Դաշնակցութեան թեկնածուներն էին 1. Հ. Օհանջանեան, 2. Վ. Քաջաղունի, 3. Ա. Դիլանեան և 4. Շ. Դեմիրչօղլեան, իսկ բողոքող գիւղացիութեան՝ Ա. Աթանասեան, Ար. Տէր-Գրիգորեան և Թ. Եղեկեան։

Ժողովի սկզբում դաշնակցական պատգամաւորները կողմնակից էին, որ ընտրութիւնները կատարվէին միասին, առանց բողոքական շրջանների բաժանվելու, բայց երբ նկատեցին, որ այդ եղանակով իրանց ձայները խեղդվելու են և թեկնածուները չեն անցնելու, երևան հանեցին առաջնորդի պաշտօնական մի գրութիւնը, որով նա ապօրինի կերպով գաւառը բաժանել էր, համաձայն իբր թէ կօնդակի 4-դ յօդուածի, հետևեալ ընտրական շրջանների՝

1. Քաղաքը և գործակալութեան I մասը իրանց 38 պատգամաւորներով ընտրելու էին մի ներկայացուցիչ։

2. Գործակալութեան II մասը իր 22 պատգամաւորներով մի ներկայացուցիչ, և

3. Ծալկան իր 9 պատգամաւորներով էլի մի ներկայացուցիչ։ Եւ այս անարդար ընտրողական շրջանների բաժանման պաշտպան հանդիսացան դաշնակցական պատգամաւորները, որ առհասարակ չատագով են քառանդամ ընտրողական սիստէմին։

Բողոքող գիւղացիութիւնը տեսնելով որ այս կէսում դժուար թէ համաձայնութիւն կայանար երկու կողմերի մէջ, նամանաւանդ որ նախագահող հ. Ուխտանէս վարդապետը պընդում էր, հակառակ իր համոզման, որ ինքը որպէս առաջնորդ պաշտօնեայ պարտաւոր է ի կատար ածել յիշեալ գրութիւնը,—համաձայնվից, որ ընտրութիւնները կատարվեն այդ եղանակով, միայն այն պայմանով, որ ինքը իր ներկայացուցչի ձեռքով բողոքելու է Վեհափառ Կաթողիկոսին այդ ապօրինի բաժանման դէմ և պահանջելու գործակալութեան I մասի և քաղաքի կողմից կրկին մի երկրորդ պատգամաւորի ընտրութիւնը։

Ի դէպ պէտք է նկատել, որ Էջմիածինը զրկել է Ախալքալաքի գաւառի ազգաբնակութեան 1/4 մասին իր ներկայացուցչին ունենալուց, որովհետև Ախալքալաքը Ծալկայի հետ միասին ոչ թէ 60000 ընակչութիւն ունի, այլ 80000-ից աւելի։

Ընտրվեցին հետևեալ անձինք. 1. Քաղաքի և գործակալութեան I մասի կողմից—Ար. Տէր-Գրիգորեան (16 սպ., 11 սև), 2. գործակալութեան II մասից—Եղիշէ Սիմէօնեանց (11 սպիտակ, 1 սև) և 3. Ծալկայի կողմից—միաձայն Արմենակ Սնդեանց (8 ձայն)։

Սևացան. Հ. Օհանջանեան (13 սպ., 14 սև), Ա. Դիլանեան (10 սպ., 16 սև)։

Իսկ Աշոտ Աթանասեանին բոլորովին չքաւէարկեցին, որպէս անձանօթ գաւառիս ազգանակութեան։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, չանցաւ տեղիս դաշնակցական կազմի և ոչ մի թեկնածուն, որոնց մասին նա համարեա թէ մի ամիս պրոպագանդ էր մղում, չենչացելով ոչ մի միջոց այդ նպատակին հասնելու համար, նոյն իսկ ոտնատակ տալով իր սկզբունքները։

Եւ այդ անշնորհ, ապիկար գործիչների անտակտ գործունէութեան հետևանքն էր որ չանցաւ մեր քաղաքի արժանաւոր թեկնածուներից մին—Հ. Օհանջանեանը։

Այս բարոյական ապտակը բաւական էր, որ դուք հասկանայիք, մեծատաւիս ազգային ջոջեր, որ սրանից յետոյ էլ ժողովուրդը ձեր կեանից եկողը չէ, որ դուք արդէն նրա կողմից բարոյական մնանկ հրատարակվեցիք։

Սրանից յետոյ որքան կուզէք, տեղիս ազգային ոստիկաններ, «Ալիքում» ձեզ գրուատեցէք, գովեցէք, բազմաստրգիր հերքումներով ուրիշներին հաւատացրէք, թէ ժողովուրդը ձեր արդիւնաւէտ, բեղմնաւոր և ազգօգուտ գործունէութիւնից շատ գոհ է, մի խօսքով մնապարծութեամբ փառաբանվեցէք։ Այդ ձեր գործն է, բայց մէջ մտնանայ, որ ժողովուրդն էլ գիտէ իր գործը։

Թող բռնութիւնները վերանան, այն ժամանակ երևան կը գայ ձեր իսկական պատկերը։

Էն-Էն

Յ. Գ.—Թղթակցութիւնս նոր էի վերջացրել, երբ ստացվեց «Ալիքի» № 70-ը։ Մեծապատիւ ազգային ջոջեր, բաւական է թագնվէք դանդան Արտաշէսների և ժողովրդի թիկունքների հետև. հրապարակ եկէք, որ ժողովուրդը տեսնէ, թէ ինչ բարոյական զատ էք. էջք անի, այն ժամանակ մեր պարտքն է ձեր գիտակները պատռել, որքան այդ կը ներեն մամուլի սուր էջերը և ազատութիւնը։ Առ այժմս այսքանը կասեմ, որ իմ առաջին նամակը գրված էր յունիսի 14-ին, իսկ աւ. ուսուցիչ Ա. Դիլանեանցին արձակած են պաշտօնից յուլիսի առաջին կիսում։

Նոյն

Կիրակի, յուլիսի 30-ին, Մողնու եկեղեցում կատարվեցին երկու ընտրութիւններ. 1) Էջմիածնի կենտրոնական ժողովի համար Թիֆլիսի կողմից 4 պատգամաւոր ընտրելու համար 3 պատուիրակների և 2) Յովհաննես-Մարիամեան գիւղացի հոգաբարձութեան ընտրութեան համար 4 պատուիրակների ընտրութիւնը։

Այդ ընտրութիւնները մի առանձին կարևորութիւն են ստանում հնորհիւ այն հանգամանքի, որ ներկայ ընտրութիւնների ժամանակ առաջին անգամ հանդէս էին եկել և այդ ևս միակ Մողնու եկեղեցում երկու կազմակերպված ոյժեր—Դաշնակցութիւնը և Մողնու պրոլէտարիատ ծխականների մի խումբ, որ հրապարակել էր ծխականներին ուղղած հետևեալ կոչը։

ԿՈՉ

Մողնու եկեղեցու ծխականներին

«Այսօր, 1906 թ. յուլիսի 30-ին, կատարվելու են երկու կարևոր ընտրութիւններ. 1) 3 պատուիրակների՝ Էջմիածնի կենտրոնական համագումարի համար 4 պատգամաւորներ ընտրելու և 2) 4 պատուիրակների Յովհաննես գիւղացի հոգաբարձութիւն ընտրելու։

Մողնու ծխականների մի խումբ, մղված ժողովրդական ազատութեան գաղափարով, որի դէմ հանդէս է եկել մի կուսակցութիւն, մղված պրոլէտարիատ ուղղութեան յաղթանակի գաղափարով, հրաւիրում է մեր ծխականներին շարունակել հաւատարիմ մնալ այն ոգուն, որով մեծամասնութիւնը առաջնորդվել է իր ընտրութիւնների մէջ վերջին մօտ երկու տասնեակ տարիներում։ Նա իր քուէները տուել է անպայման առաջադէմ, լուսաւոր, ժողովրդական շահերի և իրաւունքների պաշտպան անձանց, որոնք արդարացրել են իրանց վրա դրված յոյսերը, և ոչ անյայտ անձանց, որոնք ոչ անցեալ ունեն և ոչ էլ պատկանում են որոշ հասարակական և քաղաքական սկզբունքներ դաւանող մի կուսակցութեան կամ ուղղութեան։

Ծխականներ, արք և կանայք, ընտրենք ուրեմն այնպիսի անձանց, որոնք յայտնի են մեզ իրանց անցեալով և հասարակական ազգային ասպարէզում մեր ամենքիս առաջ կատարած անձնուէր գործունէութեամբ։ Առաջարկում ենք ընտրել այդ պահանջներին համապատասխանող.

Էջմիածնի Կ. Ժողովի համար՝

Պ. պ. Համբարձում Առաքելեանին,
Աւետիք Արապխանեանին,
Յակոբ Մանանդեանին,

եւ Յովհաննես գիւղացի համար՝

վերոյիշեալ երեքին և տիկ. Սօֆիա Երկայնաբազուկ-Արղութեանին։

Նախազգուշութիւն. «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը իր թեկնածուների յաղթանակը ապահովելու համար իր կուսակցիներն և օրգան «Ալիքի» միջոցով պաշտպանում է այն միտքը, թէ ծխական ընտրութիւններին կարող են մասնակցել նաև ոչ-ծխականներ և կամ ծխական պիտի համարվի նա, ով հէնց ընտրութիւններին կընդունայանայ և իբրև ծխական կը յայտարարէ։ Յանձնարարում ենք մեր ծխականներին թոյլ չը տալ, որ մեր եկեղեցում ևս խեղաթիրվի այն արարական գաղափարը ծխականի մասին, որով ծխական է միայն նա, ով օրինաւոր կերպով ծխական է ճանաչված»։

Կրկնում ենք, այդ առաջին անգամն էր, որ նախկին մշակականների մի փոքր խումբ հանդես էր եկել, իբրև կազմակերպված ոյժ զաղնակցական բռնապետութեան դէմ, և փորձը ցոյց տուեց, որ բաւական է առաջադէմ-ազատամիտ կուսակցութեան մի փոքր կազմակերպվել, որ կարելի լինի կառարել դիտակցական ընտրութիւն։

Աւաղ քանանց Սիմէօն Զմշկեանը բռնալով ժողովը առաջարկեց ընտրել նախագահ։ Բուէարկութիւնը ցոյց տուեց, որ պրոպէտիատ խմբի թեկնածու Հ. Առաքելեան ստացել է 59 ձայն, իսկ դաշնակցականների թեկնածու Ս. Լիսիցեան՝ 49 ձայն։

Ցայտնելով ժողովին շնորհակալութիւն իրան տուած վստահութեան քուէի համար, նախագահ Հ. Առաքելեանը առաջարկեց խօսել օրակարգի մասին։ Ճառախօսութիւնների ամփոփումը կարելի է կարդալ «Մշակի» այսօրվայ մի ուրիշ յօդուածի մէջ այդ առիթով։ Կասենք միայն, որ մի քանի ճառախօսներ՝ Ս. Լիսիցեան և Ս. Շեխեան սատիկ զայրոյթ և բողոք առաջ բերին ժողովի մէջ իրանց անտակտ և անհիմն յարձակումներով «Մշակի» և մշակականների դէմ (հարկաւոր ենք համարում յայտնել, որ «Մշակը» և մշակական կուսակցութիւնը ներկայ ընտրութիւնների, ինչպէս և Ներսիսեան գիւղացի հոգաբարձական ընտրութիւնների ամբողջ ընթացքում ամենևին չէը կազմակերպվել), այնպէս որ նախագահը ստիպվեց թոյլ չը տալ նրանց շարունակել խօսելը։

Դրանից յետոյ ձեռնարկվեց ընտրութիւններին և առաջարկված թեկնածուներից՝ էջմիածնի ժողովի պատուիրակների համար ընտրվեցին գաղտնի քուէարկութեամբ 1) Հ. Առաքելեան, ստանալով 70 սպ. և 44 սև, 2) Ա. Արապխանեան 66 սպ. և 49 սև և 3) Յ. Մանանդեան՝ 64 սպ., 53 սև։ Դաշնակցութեան թեկնածուները ստացան՝ Ս. Լիսիցեան 62 սպ., 53 սև, Ս. Շեխեան 63 սպ., 52 սև և Ն. Մատինեան՝ 59 սպ., 56։ Որովհետև քուէարկողների ամբողջ թիւը 122 էր, ուստի ընտրված համարվեց Հ. Առաքելեան, Ա. Արապխանեան և Յ. Մանանդեան։

Իսկ Յովհաննես գիւղացի հոգաբարձական ընտրութեան համար անցան նոյնպէս պրոգրէսիստների թեկնածուները, այն է վերոյիշեալ 3-ը և չորրորդը տիկին Սօֆիա Արղութեան-Երկայնաբազուկ։

Վանքի եկեղեցում պատուիրակներ՝ Էջմիածնի ժողովի համար ընտրվել են պ.պ. Տիգրան Յովհաննիսեան, Միքայէլ Մուշայեան և Ա. Բաղշեցեան, իսկ պատուիրակներ՝ Յովհաննեան գիւղացի հոգաբարձական ընտրութեան համար՝ նոյնները և պ. Գրիգոր Աբրահամեան։

Զգաշէնի եկեղեցում ընտրութիւնները եղել են աղմկալից և ծխականների մի մեծ, ատաւոր թիւ, մօտ 85 հոգի, գօրաւոր Ստեփանեանի զեկավարութեամբ, թողել հեռացել է ժողովից։ Մնացել են զուտ դաշնակցականները, որոնք, ընդունելով մի քանի ոչ-ծխական դաշնակցականներին իբրև իրաւունք ունեցող ձայն տալու, կատարել են ընտրութիւնները, և ընտրվել են բժ. Օհանջանեան և Ա. Ահարոնեան։

Դաղէթ-Ծաչէն գիւղից մեզ գրում են.

«Ամսիս 23-ին Բօգ գիւղում հաւաքվեցին Թիֆլիսի գաւառի գործակալութեան տան և վեց պատուիրակները երկու պատգամաւոր ընտրելու համար, որոնք պէտք է Թիֆլիսում ընտրեն չորս ներկայացուցիչ ս. Էջմիածնում առաջիկայ օգոստոսի 15-ին գումարվելիք կենտրոնական ժողովին մասնակցելու։ Ժողովին նախագահում էր տեղական գործակալը. ժողովականների մի քանի թեր և դէմ վէճաբանութիւններից յետոյ 13 ձայնով պատգամաւոր ընտրվեց մեր յայտնի բանաստեղծ Ղ. Ալպայեանցը (որը գտնվում էր Թիֆլիսում) և 10 ձայնով Վաշլեան գիւղի (Թիֆ. գաւ.) նորընծայ Ղազարոս քահ. Ամիրջանեանցը։ Ժողովը բաւականին լաւ անցաւ։

ՄՈՂՆՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Անցեալ կիրակի, յուլիսի 30-ին, Թիֆլիսի մի քանի եկեղեցիներում պատուիրակների ընտրութիւններ էին կատարվում, որոնք պիտի պատգամաւորներ ընտրեն Էջմիածնում օգոստոսի 15-ին կայանալիք կենտրոնական ժողովի համար։ Իբրև Մողնու սուրբ Գէորգ եկեղեցու ծխական, ես էլ այդ ժողովին էի գնացել։ Բաւականին մեծ բազմութիւն էր հաւաքված, որոնց մէջ քիչ չէր և կանայք թիւը։ Այդտեղ բացի յիշեալ երեք պատուիրակներից պիտի նաև ընտրվէին 4 պատուիրակներ Յովհաննեան գիւղացի լրացուցիչ հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու համար։

Դեռ ժողովից առաջ ծխականներին բաժանվում էին երկու կոչ՝ մէկը Դաշնակցութեան կողմից, իսկ միւսը մի «խումբ պրոլէտիատներ» կողմից, որոնցից իւրաքանչիւրը կոչ էր անում ընտրողներին իր նշանակած թեկնածուներին ձայն տալ։ Առաջինի թեկնածուներն էին՝ պ. Ս. Լիսիցեան, տ. Թադէոսեան, Ն. Մատինեան և Ս. Շեխեան, իսկ երկրորդի թեկնածուներն էին՝ պ. պ. Հ. Առաքելեան, Ա. Արապխանեան, Յ. Մանանդեան և տիկ. Ս. Երզրութեան։

Նախագահ Հ. Առաքելեան ժողովի օրակարգը պարզելուց յետոյ հարցրեց, թէ արդեօք չեն ցանկանում ժողովականները նախ քան ընտրութիւնները դիմելը մի քան խօսել օրակարգի մասին։

Պ. ատենապետի այդ ամենապարզ և տարրական առաջարկը բաւականին մեծ շփոթ առաջացրեց դաշնակցականների մէջ, որոնք չէին ցանկանում, որ այդ իրանց համար շատ փափուկ խնդրի մասին մի քան խօսվի, առաջարկում էին անմիջապէս ընտրութիւններին դիմել։ Սակայն ժողովականներից մէկը, պ. Խումարեան, խօսք վերցրեց ու ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Այստեղ գալիս ինձ տպագրված կոչ տուին՝ մէկը Դաշնակցութեան տարարգութեամբ իսկ միւսը անսոսր ոգեր, որոնց մէջ, սակայն, ես չը գտայ որոշ հայեացքներ այն խնդրի մասին, որի համար մենք ընտրութիւն պիտի կատարենք, ուստի ես, ընտրող, որ այդ երկու կուսակցութիւններից և ոչ մէկին չեմ պատկանում, կը ցանկանայի իմանալ, թէ արդեօք մեզ առաջարկված երկու կոչերի թեկնածուները մեզ զբաղեցնող խնդրի վերաբերեալ ինչով են մտմեանցից տարբերվում իրանց հայեացքներով, որպէս զի ընտրողները գիտակցաբար վերաբերվեն իրանց քուէին»։

Պ. Խումարեանի այս առաջարկին նախ պատասխանեց պ. Արապխանեանը, բաւական մանրամասն բացատրելով ազատամտիս կուսակցութեան, կամ աւելի ճիշտ և ասել՝ մշակականների ուղղութիւնը, նրանց հայեացքները և անցեալում կատարած գործը մեր բոլոր ազգային, զղջոցական, եկեղեցական և այլն խնդիրների մէջ, մի բան, որ, կարծում ենք, բոլորովին նորութիւն չէր ժողովականների համար։ Մենք նորութիւններ աւելի սպասում էինք լսել դաշնակցականների բերանից, որ և չուշացաւ յայտնելու պ. Լիսիցեանը։

—Մի քանի տարի սրանից առաջ,—ասաց պ. Լիսիցեանը,—նոյն այս տաճարների կամարների տակ մենք նոյնպէս ընտրութիւններ էինք կատարում։ Այն ժամանակ էլ երկու միմեանց դէմ մաքառող կուսակցութիւններ կային։ Մէկը ազատամիտ մշակականների կուսակցութիւնն էր, իսկ միւսը պահպանողական կուսակցութիւնը, որը, սակայն, այնչափ քաջութիւն և համարձակութիւն ունէր, որ առանց քաշվելու, բաց ճակատով յայտնում էր, թէ ինքը պահպանողական կուսակցութիւն է, այլ ոչ թէ այսօրվան պահպանողականների (մշակականների) նման կեղծում էր ու իրան ազատամիտ էր անուանում»։

Եւ այս խրոխտ առաջաբանից ու շատ լուրթ համեմատութիւնից յետոյ, պ. ճառախօսը սկսեց ապացուցանել, որ Դաշնակցութիւնը մշակականներից աւելի ազատամիտ է, և ազատամիտ է իր «գործերով», որոնցից մէկն էլ հէնց այս կենտրոնական ժողովի ստեղծելն ու գլուխ բերելն է, որի մասին մշակականները թերահաւատութեամբ էին վերաբերվում և կարծում էին, թէ չէ կարող իրականանալ։

Պ. Լիսիցեանից յետոյ խօսեց պ. Մանադեանը, որը ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Այստեղ անկեղծութեան ու բաց ճակատութեան մասին է խօսվում, մինչդեռ եթէ մենք խնդրին մօտիկից և խորը նայենք, կը տեսնենք, որ այդ առաքինութիւնները հէնց դաշնակցականների մօտ է պակասում, որովհետև այն անունները, որ կարմիր թերթիկների վրա տպված ցրվել են, իբրև Դաշնակցութեան թեկնածուներ, դեռ երեկվան մշակականներն են և, իրանց համոզումներով ու գաղափարներով, գոնէ զուտ ազգային, զղջոցական ու կրօնական խնդիրների վերաբերեալ, նրանք մազաչափ անգամ չեն տարբերվում մշակականներից, ինչպէս չէ տարբերվում և ամբողջ Դաշնակցութիւնը։ Պ. Լիսիցեանը, իբրև ազատամտութեան մի ապացոյց, պարծանքով ասաց, որ կենտրոնական ժողովի խնդիրը Դաշնակցութիւնն է ստեղծել, այն ինչ դա բոլորովին ազատամտութեան ապացոյց չի, այլ ընդհակառակը. այսպիսի մի տագնապալից ժամանակներում, երբ ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը, վերջին ծայր լարված ոյժերով, իր ամբողջ ուշքը, միտքն ու էներգիան բռնապետական հին ռէժիմի դէմ կռվելու ու նրան տապալելու վրա է դարձրել, այսպիսի մի ժամանակ, ասում ենք, ամբողջ հայ ժողովրդին զուտ ազգային ու կրօնական մանր խնդիրներով զբաղեցնելն ու գլխապտոյտ նրանցով զբաղվելը բոլորովին ազատամտութիւն չէ։ Եթէ այս կենտրոնական ժողովը սաեղծելու մէջ կառավարութեան մասը խառը լինէր, մենք անշուշտ դա մի պրովոկացիա կը համարէինք, որով կառավարութիւնը պիտի ուզենար հայերին ընդհանուր ազատագրական շարժումներից ջնատել, ինչպէս որ ջնատեց հայ-թրքական ընդհարումներով։ Բայց մենք գիտենք, որ կառավարութեան մասը չը կայ այս խնդրի մէջ, ուրեմն չը կայ և պրովոկացիա, այլ միայն մի խոշոր թիւրիմացութիւն և անհակացողութիւն Դաշնակցութեան կողմից։

«Ասացինը, որ զուտ ազգային, զղջոցական, կրօնական և այլ այդ կարգի խնդիրների վերաբերեալ հայեացքների ու հասկացողութիւնների և ոչ մի տարբերութիւն չկայ դաշնակցականների ու մշակականների միջև, և նրանք, գնէ, այդպիսի գործերի ժամանակ կարող էին փառաւորապէս ձեռք ձեռքի տուած ընթանալ, այն ինչ մենք այսօր տեսնում ենք, որ Դաշնակցութիւնը առանձնացել, մեկուսացել և պայքար է մղում մշակականների դէմ, անուանելով սրանց պահպանողական, ոչ անկեղծ և ոչ քաջ, որպէսզի բաց ճակատով իրանց պահպանողական լինելը խոստովանէին։ Բայց ես անա բաց ճակատով ասում եմ այստեղ, որ Դաշնակցութեան այդպէս առանձնանալու և մեկուսանալու պատճառը ոչ թէ համոզումների տարբերութիւնից առաջացած խնդիր է, այլ լոկ փոքր խնդիր. Դաշնակցութիւնը կամենում է այսօր ինքը միայնակ բազմել էջմիածնի այն աթոռների վրա, ուր մինչև այժմ բազմած էին հէնց իր հայեցած սեպալուները, և միայնակ վայելել նրանց մինչև օրս վայելածները։ Եւ հէնց այդ բանի մէջ համոզված լինելով, նոյնպէս բաց ճակատով յայտնում եմ, որ հէնց դրա համար էլ ես և քուէ պիտի տամ Դաշնակցութեան այսօրվան թեկնածուներին, որոնցից ոմանց ես անձնապէս յարգում և սիրում եմ»։

Այս դառը դեղանախիները փառաւորապէս կուլ տուեցին պ. պ. դաշնակցականները, առանց մի որ և է հակաճառութիւն անելու։

Ա.

«ԽՄԲԱՊԵՏԸ» ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ Է ՄՂՈՒՄ ՄԱՀԱԿՆԵՐՈՎ...

Մտորել դնում ենք այն զեկուցումի պատճէնը, որ Իգդիրից ուղարկված է Վաղարշապատ մատուցանելու Վեհափառ Կաթողիկոսին։ Այս զեկուցումը գալիս է մի անգամ էլ յայտարարելու, որ մեզանում գոյութիւն ունի երկու ըէժիմ (որոնք թէև ներկայացուցչեներով տարբեր, բայց էութեամբ միատեսակ են)—պետական և «ազգային»։

«Գոլիցիա, ծեծ, աքսոր»—լսում էինք Դումայի ընտրութիւնների ժամանակ։

«Մարապետ, ծեծ, տարձանակով սպառնալիք»—լսում ենք այժմ կենտրոնական ընտրութիւնների ժամանակ։

Տարբերութիւնն այն է, որ Դումայի ընտրութիւնների ժամանակ գործում էին բռնութիւնների և ճնշումների կողմակից պաշտօնեաները, իսկ այս ընտրութիւնների ժամանակ բռնութիւնների ու ճնշումների հանկառակ գաղափարականներ։

Կառավարութիւնն աշխատում էր արգելացնել իրան և անմեղ զուտ դուրս գալ. նոյնը կատարում է նաև «կազմակերպութիւնը»։

Մնում է այժմ լսել տիրող «ազգային» ըէժիմի ներկայացուցչին, հայկական «Прав. Вѣстн.»-ին—«Ալիք»-ին։

«Անտամենայնիւ այդպիսի բաներ չեն կատարվել»—պիտի գոռան «Ալիքի» գիլիէյները։

Գակաս է միայն պագրօմը, պարոնե՛ր...

Կայէն

Վաղարշապատ.

Նորին Վեհափառութեան Տ. Տ.
Մկրտչի Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց
Սուրմալուի գաւառի Դաշքուռուն գիւղի բնակիչ Առաքելեանից
Ամենախոնարհ զեկուցումն

Ենթարկվել ամենախտ վիրաւորանքի իմ համոզման, իմ դատողութիւններս ազատ յայտնելուն համար այն մարդոց կողմից, որոնք ի լուր աշխարհի բղաւում են «համոզմունքի ազատութիւն» և այլ մեծազդրդիւ խօսքեր, ասվի քան անտանելի է։

Այն դերը, Վեհափառ Տէր, որ խաղում են Դաշնակցութեան անդամները մեզանում Ձեր տուած յայտնի կօնդակից յետոյ, արդէն չափ ու սահման չունի։ Դուք Ձեր կօնդակով շնորհեցիք մեզ ժողովրդական ազատ ընտրութեան իրաւունք, բայց միևնոյն ժամանակ ենթարկեցիք մեզ, խեղճ գիւղացիներս, անասելի բռնութեան։ Ձը կայ կամքի և մտքի ազատութիւն, չը կայ մարդկանց ապահովութիւն։

Ամեն մի պատասխան անձնաւորութիւն, որ դաշնակցական է կամ այդ կուսակցութեան մէջ մի պաշտօն ունի, գալիս է մեր գիւղը և ինքնագլուխ ընտրութիւններ անում։ Պատուիրակներ ընտրելու համար Իգդիրից եկաւ ոմն Տիգրան Ղազարեան և ընտրութիւն արաւ մի այդում առանց նախօրօք յայտնելու այդ մասին ժողովրդեան։ Ինքը երկու ուրիշ համախոհների հետ ընտրվեց ու հեռացաւ ինքնագոհ։ Այս ընտրութիւնը, որ ըստ ամենայնի ապօրինի էր, հայր գործակալին տուած բողոքի հիման վրա բեկվեց և նոր ընտրութիւն նշանակվեց։ Նոր ընտրութեամբ 315 ձայնով ընտրվեցինք ես և մեր համագուղացի ուրիշ երկուսը։ Այս ընտրութեան հետևանքով գոհ չէ մնում, ինչպէս երևում է, Իգդիրի Դաշնակցութեան կոմիտէն, և անա տեսնում ենք այսօր ամսիս 23-ին կոմիտէի անդամներից մէկին մեր գիւղում ընտրութիւններ անելիս։ Ինձ կանչում են եկեղեցի (ուր հոգու 40 իրաւասու լինէր հաւաքված) և հրամայում են ստորագրել այն թերթը, որով ընտրել էին ուզում իրանց ուզած մարդկանց։ Իմ հայտնելին, թէ նրանք ինչ իրաւունքով են ձեռնարկում նոր ընտրութեան, քանի որ օրինաւոր ընտրութիւն եղած է արդէն և համախօսականն ուղարկված հ. գործակալին ի հաստատութիւն, և կամ նոր ընտրութեան համար ունեն գործակալից իրաւունք—կոմիտէի անդամը պատասխանում է, որ այդ իր իրաւունքն է, չընայելով որ հ. գործակալից (որից անձամբ տեղեկացայ) չունէր ոչ բերանացի և ոչ գրաւոր հրահանգ։

Այսպէս թէ այնպէս ինձ տիրում են ստորագրել. ես ընդդիմանում եմ և դուրս գնում եկեղեցուց. դուրս գալիս տեղական զինուորական խմբապետը, որն ունէր ձեռին մարակ, ապտակում է ինձ. գրանից յետոյ խմբապետի երեք զինուորները մահակներով հարուած են տալիս։ Զափազանց վիրաւորված բարոյապէս և թեթև ֆիզիքապէս թողնում եմ մեր գիւղը և Իգդիր գալիս անմիջապէս, որպէս զի կատարված մի գեղ ու գործան անել իմ պատիւը, որը խիստ թանկ է գեղացիդի համար։ Սակայն այժմ աւելի մեծ անպատւութեան և ճնշման եմ ենթարկվում ազատութեան համար մարտնչողների կողմից։

Նորին Վեհափառութեանդ չը ձանձրացնելու համար վերջացնում եմ խօսքս յայտնելով, որ այսու ես կամենայ որդիական ակնածութեամբ Ձեր առաջ գնել այն իրողութիւնը, որ ապագայում կենտրոնական ժողովում կը լինեն ոչ թէ ժողովրդի ներկայացուցիչները, այլ նրա մի կուսակցութեան։

Համբուրելով ս. Աջդ՝ մնամ ամենախոնարհ որդի և ծառայ՝ Մ. Առաքելեան

Իգդիր, 23 յուլիսի

ԽՈՍՏՈՒՄ ԵՒ ԳՈՐԾ

Ներսիսեան գիւղացի «Նոր կուրսի» հոգաբարձութիւնը ունեցել է վերջին նիստում մի վարմունք, որ պարզ ցոյց է տալիս, թէ որքան սխեպտօրէն պէտք է վերաբերվել ճճռան փիգրներին, որոնք արտասանվում են միայն միամիտների աչքին թոզ փչելու համար։ Ով մասնակցել է պատգամաւորական այն ժողովին, որ կոչված էր ընտրելու այդ հոգաբարձութիւնը, նա կարող է վկայել, որ այդ ժողովում պարոն դաշնակցականները պնդում էին և պահանջում, որ հոգաբարձութեան նիստերին մասնակցեն խորհրդակցական ձայնով ոչ միայն կանդիդատները, այլև աշակերտների ծնողները և, ի հարկէ, նաև մամուլի ներկայացուցիչները։ Սակայն հազիւ հոգաբարձուները ընտրվեցին, որ իսկոյն մոռացվեցին այդ բազմախոստում և ազատամիտ խօսքերը։ Համաձայն ժողովի այդ որոշման, որը նախագահ Տ. Յովհաննիսեան, յայտ ունենք, չուրանալու քաղաքացիական քաջութիւնը կանենայ, հոգաբարձութեան կանդիդատ պ. Ն. Կաճկաճեան կամենում է մասնակցել նիստին, բայց հոգաբարձութիւնը թոյլ չէ տալիս նրան, և նա ստիպվում է հեռանալ։ Հոգաբարձութեան վերջին նիստին, յուլիսի 28-ին, հոգաբարձությունը սատիկ զժգոհութիւն են յայտնում, որ յուլիսի 26-ի նիստի որոշումները ազվիլ են «Մշակում», և մեղադրում այն անդամին, որ, պատահաբար, հաղորդած է լինում այդ նիստի մասին լուրը այն շատ հասարակ նկատումով, որ ծածկելու, թաղցնելու, գաղտագողի գործելու ոչ մի պէտք չը կայ։ Եւ ազատամիտ (թարսին) ու մամուլի ազատութեան մասին ճառող դաշնակցական հոգաբարձուները որոշում են կայացնում, որ այսուհետև մամուլին հաղորդվին միայն այն լուրերը, որ իրանք հարկաւոր և յարմար կը տեսնեն հաղորդելու։ Դրանից հետևում է, որ մամուլի ներկայացուցիչներին նոյնպէս չը պէտք է թոյլատրվի ներկայ լինել հոգաբարձութեան նիստերին, ինչպէս չը թոյլատրվից կանդիդատ Կաճկաճեանին։ Եւ հոգաբարձութեան մէջ չը գտնվեց մի անձն, որ բողոքէր այդ և ասէր այդ մարդկանց, թէ ինչ որ չէք կատարելու մի խոստանաք։

ԿՐՕՆՇՏԱԴՈՒՄ

Յուլիսի 19-ին ցերեկը հանդիսաւոր անցաւ Սվէաբօրգից ապատամբված չորս նաւերի գալու մասին տարածված լուրին Կրօնշտադում նշանակութիւն չէին տալիս։ Երեկոյեան դէմ յամառ լուր տարածվեց, որ Կրօնշտադի մէջ զօրամասերը ապատամբել են։ Երեկոյեան ժամի 11-ին քաղաքից դուրս, բանակատեղում, լսվեցին հրացանաձգութեան ձայներ, և սարսափահար եղաւ ժողովուրդը։ Հրացանաձգութեան պատճառը, ինչպէս յետոյ պարզվեց, սապօրների և ականային վաշտերի ապատամբութիւն է եղել։ Ապատամբ զինուորները, յարձակվում են իրանց օֆիցերների բնակարանների վրայ, սպանում են նրանց զլխաւորներին և ապա գրաւում են բերդային երկաթուղու գնացքը։ Նախապէս հանդգնելով շտեղերգ կաթսայի կրակները, նրանք մօտենում են Կրօնշտադի ամենազօրեղ ամրութիւններից մէկին՝ «Կօնստանդին» և առանց դժուարութեան գրաւեցին հեռացրին թնդանօթների մօտից այն թնդանօթաձիգ զինուորներին, որոնք չէին ուզեցել միանալ ապատամբներին։ «Կօնստանտին» ամրոցի վրա կանդնեցրին կարմիր դրօշակը և ազդանշաններ տուին միւս ամրութիւններին ևս միանալ իրանց հետ։

Այդ միջոցին ափից «Կօնստանդին» վրա ուղղվեցին դաշտային արտիլերիայի

խանատու նոյն եկեղեցու ծխական ժողովրդի առաջ և պարտաւորված լինելով զուտ տեղական բնաւորութիւն ու նշանակութիւն ունեցող ինդիրների վերաբերմամբ ընթանալով իր ծխական ժողովրդի ընդհանուր ժողովների ծրագրած ցուցմունքների և հրահանգների համաձայն։

Միական հոգաբարձութիւնը, իբրև ընդհանուր ժողովների կողմից կարգված գործադիր իշխանութիւն զգաստ լինելու, պարտականաց և իր պարտաւորութիւնները հշտուելաց համար, ցանկալի թեամբ կասուցանէ ծխական երեսփոխանական խորհրդի մշտական հսկողութեան, վերոյիշեալ ցուցմունքներ։

Այս ծխական երեսփոխանական խորհուրդը նախատեսված է օրէնքի մէջ ռուս եկեղեցիների վերաբերութեամբ և հիմնված է ծխականների այն իրաւունքների վրա, որով նրանք քննութեան են ենթարկում ծխական հոգաբարձութեան գործունէութիւնը։ Օրէնքը թոյլ է տալի այդ վերահսկողութեան գործադրութիւնը վերապահել մի յատուկ և միայն մարմնի, ինչպէս ծխի կողմից ընտրված 3-ից մինչև 15 երեսփոխանութիւնից բաղկացած խորհուրդն է։ «Հոգաբարձութեան հաշիւների ստուգութեան և այլ կարգադրութիւնների համար, ծխականները, բացի հոգաբարձութեան անդամներ ընտրելուց, կարող են իրենց միջից նշանակել (ընտրել) 3-ից 15 մարդ իբրև լիազօրներ, նայած ծխի ընդարձակութեանը» (տես Собр. узаконеній и распор. правительства 5 сентяб. 1864 г. № 78—*положеніе о приходскихъ попечительствахъ при православныхъ церквахъ*)։

Այսպիսով իւրաքանչիւր մը եկեղեցու համայնք իր եկեղեցական, դպրոցական, կրթական, տնտեսական, առողջապահական, բարեգործական ու մարդասիրական ամեն տեսակ հասաստութիւններն ու կարիքները հոգալու համար կունենար ծխական ընդհանուր ժողով, ծխական երեսփոխանական խորհուրդ և ծխական հոգաբարձութիւն։

Իւրաքանչիւր եկեղեցի ծխական հոգաբարձութեան միջոցով անմիջապէս կապված պիտի լինի թեմական իշխանութեան հետ։ Փոխանորդներն ու հոգևոր կառավարութիւնները հենց այսօր ապօրինի կերպով բրուած են մի ուեւորդ մէջին տեղ թեմականի ու ծխականի մէջ։ Նոյն իսկ թէ հնումը և թէ այսօր մեր «պրօշենական» շրջանում թեմի -վիճակի առաջնորդ է եղել իր մօտ ունեցած խորհրդով անմիջական վարիչը իր վիճակի եկեղեցիների։ Միւս մէջին տեղ բռնողները՝ քորեպիսկոպոս կամ նուիրակ կամ գործակալ եղել են և են թեմական իշխանութեան այս կամ այն յանձնարարութիւնը կատարողներ—տեղ հասցնողներ—անիրաւունք միջնորդներ։

Մեր օրերում հոգևոր կառավարութիւնները իրանց գլուխ կանգնած առաջնորդական փոխանորդներով իւրացրել են իրանց մի մի առաջնորդական գիրք։ Նրանք բողոքներ են ընդունում, քննութիւններ են անում, վճիռներ են արձակում, պատիժներ են տալիս այն բոլոր սահմաններում, որ անընդունելի է հանդիսանում։ Այն ինչ հոգևոր կառավարութիւնները «Պրօշենիայի» 1191, 1192 և 1193 յօդ. հիման վրա (տրատ. 1896 թ.) իրաւունք չունեն կատարելու և ոչ մի գործ առանց այդ մասին յանձնարարութեան իրանց կենսատուբիսների կողմից։ Այս կառավարութիւնները պարզապէս տեղեկութիւններ ժողովող, վիճակագրութիւններ կազմող և այլ չէզոք միջնորդներ են թեմական իշխանութեան և ծխական եկեղեցու մէջ։ Նոյն «Պրօշենիայի» 1205-դ յօդուածով մեր եկեղեցու սրբազնագործ պաշտօնեաները անմիջապէս կախված են թեմական իշխանութիւնից։ Անմիջականը փոխանորդով ընդունում ասելն չէ կարող. սա ապօրինութիւն է։ Մեր օրերում գործակալներն էլ իրանց ղբջանում մի մի առաջնորդներ են։

Զինուիլիկան, բիւրօկրատական հոգին վանել վռնդել է մեր թեմական հոգևոր իշխանութեան միջից պարզ յարաբերութեան աւետարանական պանծալը։ «Լայեաղ» չեն ասում անմիջական յարաբերութիւններ ունենալ ամեն մի քահանայի հետ, ամեն մի գործակալի հետ։ Քահանան իր դիմումը պիտի ուղղի գործակալին. գործակալը իր իմացածներն ու կարդացածները գործ է դնում և ապա, եթէ իր միջոցով գործը չէ վերջանում, բարեհաճում է ներկայացնել հոգևոր կառավարիչը կամ փոխանորդին, մաքուրը գրելով պատժելու առաջին յարմարութեամբ իր իշխանութիւնը քահանայի։ Մոյնպէս վարվում է և հոգևոր կառավարիչը՝ փոխանորդը. կամ իր իրաւունքով չանհանգ է լինում վերջ դնելու գործին, կամ խիստ դժկամութեամբ և ոխակալութեամբ լցված՝ ինդիրը հասցնում է թեմական իշխանութեանը։

Ժամանակ է վերջ դնելու այս ապօրինի և ճնասակար իրաւազանցութիւններին ու ահարկու ձգձգումներին։

Ծխական եկեղեցուց յետոյ պիտի իբրև երկրորդ բնական հանդիսանայ թեմական իշխանութիւնը, որ պիտի բաղկացած լինի թեմական պատգամաւորական ժողովից և այս ժողովի կողմից ընտրված թեմական խորհրդից (կենսատուբիս) թեմական առաջնորդի նախագահութեամբ։

Որպէս զի թեմական իշխանութիւնը հնարաւորութիւն ունենայ արդիւնաւոր կերպով վարելու իր պարտաւորութիւնները, պէտք է սեղմել նրա աշխարհագրական սահմանները, ուրիշ խօսքով՝ պէտք է փոխանորդութիւններն ու հոգևոր կառավարութիւնները վերացնելով, հատատել առաւել նեղ սահմաններով ու շատ Քով թեմեր, քան թէ այժմ ունենք։

Ռուսաստանի 6 թեմերը կարելի է վերածել 15 թեմերի։ Այսպիսով իւրաքանչիւր եկեղեցի իր անմիջական յարաբերութիւնը թեմական իշխանութեան հետ կը պահի հատատ պայմաններով և հնարաւոր դիւրութիւններով։

Թեմական իշխանութեան մէջ թեմական խորհուրդը իր նախագահ առաջնորդով հանդիսանում է կառաւարական իշխանութիւն, միաւորելով ու լինելով պատասխանատու թեմական պատգամաւորական ժողովի առաջ և պարտաւորված ընթանալու այդ ժողովի ցուցմունքների ու որոշումների սահմաններում։ Այս պարտաւորական սահմաններում վերապահում է իրան իրաւունք բողոքելու կենտրոնական

*) Տես՝ «Մշակի» ներկայ թիւ. №№ 118 և 123

Թեմական խորհրդի (կենսատուբիս) անդամների ընտրութիւնը հենց հիմաւորը «Պրօշենիայով» էլ կայ ու պահած է այդ մասին մենք մանրամասնութեամբ խօսած ու գրած ենք առաջ *)։ Իսկ ինչ վերաբերում է նրա կազմին, որ ըստ «Պրօշենիայի» պիտի բաղկացած լինի հոգևորականներից, կարելի է տալ փոխելու, եթէ արդէն իսկ փոխված չէ Փոխարքայի վերջին կանոններով։ Այս կանոններով քանի որ ծխական հոգաբարձութիւնները բաղկացած են աշխարհականներից, քանի որ եկեղեցական ու նոյն իսկ վանական ստացուածքների ու կալուածների կառավարութիւնն անցած է աշխարհականներին, շատ պարզ է, որ այսուհետև կենսատուբիսների զուտ հոգևոր անձերից բաղկանալու պայմանը քանդված պէտք է համարել։ Իսկ ծխական ընդհանուր ժողովներով ու երեսփոխանական խորհուրդներով ունենալիք վերահսկողութեան մէջ գոյութիւն ունի թեմական պատգամաւորական ժողովը։

Թեմական պատգամաւորական ժողովը, ինչպէս և թեմական խորհրդի ժողովրդի կողմից ընտրելու պարտաւորիչ պայմանը ամփոփված է և այսօր իսկ կայ մեր հինաւուրց «Պրօշենիայի» նաև 1213 դ յօդուածի մէջ։ Այս յօդուածով հայ-լուսաւորչական մէն-մի եկեղեցու կամ աստուածաճաճոյ հաստատութեան շարժական և անշարժ ստացվածքը պատանում է ընդհանուր հայկական եկեղեցուն։ Ուրեմն ինչ իրաւունք որ մէն-մի ծխական եկեղեցու ժողովուրդ իր ընդհանուր ժողովով ունի իր եկեղեցու շարժական ու անշարժ ստացուածքների վերաբերութեամբ, նոյն իրաւունքը ունի թեմի եկեղեցիների հաւաքական ժողովուրդ իր թեմական պատգամաւորական ժողովով իր թեմի եկեղեցական շարժական ու անշարժ ստացուածքների՝ վերաբերութեամբ։ Այսինքն ինչպէս ծխական ժողովը հրահանգիչ, քննող, հաստատող է եկամուտներ սահմանելու, ժողովելու, գործադրելու, ծրագիրներ, նախագծեր և բիւջէներ վաւերացնելու մէջ, նոյն իշխանութիւնը պիտի ունենայ և գործ դնի թեմական պատգամաւորական ժողովը թեմի եկեղեցիների հաւաքական բարեստացուածքների ու սրանցից ստացվող եկամուտների նկատմամբ։

Ռուսաստանի մէջ երրորդ և վերջին ինստանցիան մեր եկեղեցական սահմանադրութեան մէջ հանդիսանում է կենտրոնական ժողովը իր կենտրոնական խորհրդով (սինոդով)։ Էջմիածնի պատրիարքի նախագահութեամբ։ Իսկ բարձրագոյնը և հանրազգային եկեղեցականը է և կը մնայ համազգային ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ։

Այս համազգային ժողովի վճիռները, իբրև օրէնք, Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր կոնդակներով տարածում է ի սիրուս աշխարհի գտնված հայութեան մէջ և եկեղեցու ամբողջութեան համար դառնում է անպայման կատարելի և հիմք, որի վրա կառուցվում են իւրաքանչիւր հատուածի տեղական վարչական շէնքերը։

Այսպիսով կենտրոնական ժողովն ս. Էջմիածնի պատրիարքով ուսանաց եկեղեցու նըկատմամբ նոյնն է, ինչ որ ազգային ժողովը Կ. Պոլսի հայոց պատրիարքով տաճկահայ եկեղեցու նկատմամբ, ինչ որ Երուսաղէմի միաբանական ժողովը իր պատրիարքով Երուսաղէմի հայ եկեղեցու նկատմամբ։ Իսկ ինչ վերաբերում է մեր ազգային եկեղեցու միւս հատուածներին՝ Պարսկահայքին, Եգիպտահայքին, Ամերիկահայքին և Եւրոպահայքին՝ պէտք է և ցանկալի է, որ ունենան տեղական ինդիրները կարգադրելու համար իրանց ժողովական ներկայացուցչութիւնը իրանց կողմից ընտրված առաջնորդներով և գրված լինեն նոյն յարաբերութեան մէջ դէպի Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու համազգային ժողովը, ինչ որ կենտրոնական և ազգային ժողովներն իրանց ղբաբերութիւնքներով։

Ուրեմն մեր եկեղեցական սահմանադրութեան հանրական կառավարութիւնը գտնվում է համազգային ժողովի բարձրագոյն իրաւասութեան ներքոյ։ Իսկ իւրաքանչիւր քաղաքական, աշխարհագրական հատուած ունի իր կենտրոնական, թեմական և ծխական ժողովներն ու խորհուրդները, բոլորն էլ ընտրված ժողովրդի հաւասար ձայնատուութեամբ։

Մեսրոպ աւագ-քահանայ Մելիան

ՅՈՒՆԻՍԻ 7-Ի ԿՈՆԴԱԿԸ

V

Վերևում ես ասացի, որ Մատթէոս վարդապետը ըստ երևութին մեր եկեղեցին դասակարգային է համարում. ըստ երևութին ասացի։ որովհետև երբ մի մարդ շփոթում է ամենահիմնական գաղափարները, դժուար է նրա մասին որոշակի կերպով ասել, թէ ինչը ինչ է համարում։ Ըստ երևութին նա հոգևորականութիւնը յատուկ կազմակերպութիւն է ուզում տալ, որը և պիտի առանձին պատգամաւորներ ընտրէ. բայց մի և նոյն ժամանակ, ըստ երևութին, նա այնքան հոգ չէ տանում հոգևորականութեան պատգամաւորների մասին, որքան հոգևորական պատգամաւորների է վերջապէս, ի լրումն ամենայնի, խառնում է այդ բոլորը...

Այս բոլորը այսքան խառնաշփոթված լինելով, դժուար է կարուկ կերպով որոշել արդեօք եկեղեցական իշխանութեան տէր ով է հանդիսանում ըստ Մատթէոս վարդապետի։ Ըստ երևութին նրա կարծիքով մէկ անբաժան եկեղեցական համայնքը (հոգևորականներից ու աշխարհականներից բաղկացած) չէ եկեղեցու գլխաւոր հրամանատարն ու կարգադրիչը, այլ թէ աշխարհական դասակարգը և թէ հոգևորական դասակարգը իրբև երկու բաժան տէրեր, իշխանութեան դուալիստիկ կազմակերպութիւն (միևնոյն ժամանակ նաև դասակարգային)։ Այս իր յօրինուածքի (կենսարուկցիայի) համեմատ նա օր. առաջարկում է, որ կենտրոնական ժողովի անդամները ընտրվեն առանձին-առանձին հոգևորականութեան ու աշխարհականների կողմից, որ առաջնորդներին, յայտնորդներին «կից» «աշխարհականների խորհուրդներ» լինեն «ձայնի իրաւունքով»։ Ուրիշ խօսքով, ժողովուրդը, համայնքը եկեղեցու տէրը չէ, այլ իր եկեղեցական իշխանութիւնը պէտք է բաժանէ հոգևոր իշխանաւորների հետ։

Բայց այս այսպէս ընդունելով Մատթէոս վարդապետը ընդունում է և մի ուրիշ սկզբունք, որ գալիս է խախտելու ու հերքելու իր այդ ընդունածը։ Նա ընդունում է, որ «ժողովուրդը» ունեցել է, ունի և պիտի ունենայ «իրաւունք իր հոգևոր պաշտօնեաներին ընտրելու»։ Ի հարկէ, Մատթէոս վարդապետը չէ էլ կարող ժխտել ընտրական սկզբունքը։ Ես չը գիտեմ, արդեօք կը գտնվի մեզանում գտնէ մէկը, որ յանդգնէր չընդունել այդ սկզբունքը։ Սակայն ինչպէս այդ ընդունողներից շատերը, այնպէս էլ Մատթէոս վարդապետը հաշիւ չէ տալիս իրան, թէ ինչ է նշանակում ընդունել ընտրական սկզբունքը իբրև պարտադիր կանոն։ Այո, հաշիւ չեն տալիս, պա թէ ոչ չէին այնպէս մտածի, թէ եկեղեցին կառավարն պիտի հոգևորականները, իսկ ժողովուրդը կարող է միայն ընտրել սրանց. իբրև թէ ժողովուրդը ոչինչ չը պիտի կարգադրէ ու անօրինէ եկեղեցական գործերում, այլ ամենաշատը պարբերաբար պիտի ժողովի գումարվի լոկ ընտրելու հոգևոր պաշտօնեաների, և ահա սրանք են, որ պիտի կարգադրեն ու կառավարեն։ Մինչդեռ պարզ է, որ ով որ ընտրում է կառավարիչներին, նա է կառավարութեան ու իշխանութեան տէրը (սուբէկտը), իսկ կառավարիչները լոկ հրամանատարի դեր պիտի ունենան, եթէ ընտրված են։ Հետևապէս, եթէ եկեղեցու բոլոր պաշտօնեաները ընտրվի պիտի լինեն ժողովրդից, ապա ուրեմն եկեղեցին ժողովրդավար (դէմօկրատիկ) կազմակերպութիւն է։

Բացարեմ։ Եթէ ժողովուրդը իրաւունք ունի ընտրելու եկեղեցու պաշտօնեային, նա, ուրեմն, իրաւունք ունի նաև պաշտօնից արձակելու նրան։ Այս ինքնրստինքեան հասկանալի է, ոչ միայն այն պատճառով, որ իրաւաբանական ընդհանուր սկզբունքի համաձայն իւրաքանչիւր պաշտօնեայ ինչ կարգով որ կարգվում է մի պաշտօնի, նոյն կարգով էլ պիտի արձակվի, այլ մանաւանդ նրա համար, որ եթէ ժողովուրդը ընտրելու իրաւունքը ունենար, իսկ արձակելուը չունենար, պարզ է, որ այդ ընտրելու իրաւունքը լոկ անուանական մի բան կը լինէր, մեռած տառ առանց իր իսկական նշանակութեան։ Այս պատճառով, ամեն տեղ ուր գոյութիւն ունի ընտրական իրաւունքը և ոչ թէ լոկ անունով, այլ իրականապէս, ժողովուրդը, յանձին իր որոշ պատգամաւորական ժողովների, ոչ միայն ընտրում է, այլ նաև արձակում պաշտօնեաներին։ Եթէ ժողովուրդն է ընտրողն ու արձակողը, ապա ուրեմն ընտրված պաշտօնեան համարառ ու պատասխանատու է նոյն ժողովրդի առաջ, որը և ուրեմն իրաւունք պէտք է ունենայ հսկելու, պաշտօնեայից հաշիւ պահանջելու, նրա գործունէութիւնը քննադատելու և նրբ հարկ համարի նրան պատասխանատուութեան ենթարկելու։ Իսկ ինչ է նշանակում հաշիւ պահանջել ու քննադատել, եթէ ոչ պաշտօնեայի գործունէութիւնը լաւ կամ վատ յայտարարել իր տեսակէտով ու հասկացողութեամբ։ Եթէ պաշտօնեայի գործունէութիւնը վատ է համարում ընտրողը — հետևապէս նա կարձակէ նրան պաշտօնից։ Ուրեմն, պաշտօնեան, եթէ ուզում է վարել իր պաշտօնը, պէտք է գործէ իրեն ընտրելու ու արձակելու իրաւունք ունեցողի կարծիքներին, ցանկութիւններին ու հասկացողութիւններին համակերպվելով, որով այս ցանկութիւններն ու հասկացողութիւնները հրահանգի, հրամանի ընդունութիւն են սահմանում անիրաւ իսկ ընտրող, որ պաշտօնեան պարտաւորվում է կատարել։

Պարզ է ուրեմն, որ ընտրողը, թէ իրօք տէր է այդ իրաւունքին, միաժամանակ թէ արձակող է թէ հանուանու, թէ հրանդող, թէ հրամայող, կարճ ասած՝ տէր է իշխանութեան, կարգադրիչ է ու անօրէն։ Ու. եթէ դուք իրօք ժողովուրդ էք ընտրելու տէր համարում (իրօք, և ոչ թէ խօսքի համար, կեղծաւորութեան համար), ապա պարտաւոր էք թէ իրաւաբանորէն և թէ տրամաբանօրէն ընդունելու, որ ժողովուրդն է եկեղեցական կառավարութեան կարգադրիչը ու անօրէնը։

Եթէ Մատթէոս վարդապետը ընտրական իրաւունքի մասին ճիշտ հասկացողութիւն ունենար, այն ժամանակ ոչ յիշեալ խոչոր հաստատութեան մէջ կընկնէր, ոչ էլ մի ուրիշ անհեթեթ առաջարկ կանէր, որ ընտրվի հոգևոր պաշտօնեաներն ընտրող ժողովրդին հաւասար իրաւունքի տէր հանդիսանան։ Օրինակ նա այսպիսի բան է ասում. «Հնումը գոյութիւն չեն ունեցել ոչ ծխական, ոչ թեմական և ոչ կենտրոնական ժողովներ» պնդելով, Մատթէոս վարդապետը «սակայն» առաջարկում է, որ դրանց փոխարէն «մեր հոգևոր վարիչներ», գործակալների, փոխանորդների և առաջնորդների «մօտ» կամ «կից» «աշխարհականների խորհուրդներ» լինեն «ձայնի իրաւունքով»։ Նա ոչինչ չէ ասում, թէ այդ ինչ խորհուրդներ են, ով է ընտրում դրանց անդամներին։ Ոչ, իր հասկացողութիւններին հաւատարիմ մնալով, նա էլի, «աշխարհականի» ու «հոգևորականի» տարբերութիւնն է անտեղի կերպով մէջ բերում, առանց մտածելու որ թէ կարգ այդ խորհուրդների անդամները աշխարհական լինեն, բայց եթէ դրանք պիտի նշանակվեն առաջնորդից կամ յայտնորդից, պարզ բան է, որ այդ «աշխարհականների խորհուրդները» ամենաանպտուղ խորհուրդներ են լինելու։ Մի թէ աշխարհականների մէջ անպիտանականներ չը կան։ Իսկ եթէ այդ խորհուրդների անդամներին ժողովուրդն է ընտրելու, այն ժամանակ ոչ մի միտք չունի սահմանափակելու ժողովրդի ընտրողական և հոգևորականների ընտրելիութեան պասիվ-ընտրական իրաւունքը և պահանջելու որ միմիայն աշխարհական խորհրդականներ ընտրվեն։ Մի թէ հոգևորականների մէջ պիտանիներ չը կան։

Բայց մի թէ Մատթէոս վարդապետը չը գիտէ, որ այդպիսի խորհուրդներ արդէն գոյութիւն ունեն. մի թէ մոռացել է մեր հոգևոր կառավարութիւնների և կենսիսորիաների մասին։ Ի՞նչ են այս հաստատութիւնները, եթէ ոչ «խորհուրդներ» առաջնորդների ու յայտնորդների «կից», «մօտ», «ձայնի իրաւունքով»։ Ճիշտ է, այդ կենսիսորիաների ու հոգ. կառավարութիւնների անդամները տիրող օրէնքով միայն հոգևորականներ կարող են լինել, և թէև օրէնքով ձայնի իրաւունք ունեն, բայց իրօք երբէք չեն համարձակվում օգտվել։ Ճիշտ է, այդ հաստատութիւնները պէտք է հիմնվեն կերպարանափոխել։ Բայց միայն անդամներին աշխարհական դարձնելով ոչինչ չի բարեփոխվի, եթէ ժողովրդից չընտրվեն։

Վերջապէս, թէկուզ բարեփոխենք, թէկուզ բոլորովին նորից նոր խորհուրդներ ստեղծենք առաջնորդներին ու յայտնորդներին «կից», մի թէ Մատթէոս վարդապետը կարծում է, թէ այդ խորհուրդները կը կարողանան փոխարինել և աւելորդ կացուցանել թեմական և ծխական ժողովների գոյութիւնը։ Ի՞նչ աստիճան մարդ պէտք է չը հասկանայ թեմական պատգամաւորական ժողովի գաղափարն ու էութիւնը, որ շփոթէ այդպիսի «խորհուրդներին» հետ։ Թեմական ժողովը, թեմական եկեղեցական համայնքի այդ լիազօր ներկայացուցիչը, նրա կամքի արտայայտիչը ու իրաւունքները բանեցնողը մի թէ կարող է առաջնորդին «կից», կամ առաջնորդի «մօտ» գոյութիւն մի ունեցող հաստատութիւն համարվել կամ այդպիսի մի հաստատութեան հետ շփոթվիլ։ Թեմական ժողովը, որ առաջնորդին ընտրելու ու արձակելու իրաւունքն ունի, նոյն առաջնորդին հաւասար մի հաստատութիւն չէ, ոչ թէ նրան «կից» է, այլ նրա «վրա», նրանից բարձր է. ոչ թէ նրա հետ միասին գործող, այլ նրան հրամայող ու հարկադրող է։

Այո, այն ընտրական իրաւունքը, որը «Մատթէոս վարդապետը մեր եկեղեցու կեանքում «զարաւոր» ու պարտադիր է համարում, դիւթական զօրութիւն ունի։ Նա ամբողջ իրաւունքը ժողովրդի ձեռքն է տալիս և կերպարանափոխում ու յեղաշրջում է ամբողջ կառավարութեան օրպիսութիւնը։ Ահա թէ ինչու պառամենտարիզմը, այսինքն պետական կազմակերպութեան այն ձեը երբ մինիստրներին պառամենտն է ընտրում ու արձակում, իրօք նաւասար է դէմօկրատիայի, հանրապետութեան. և օրինակ՝ անգլիացի իրաւաբանները իրանց պետութեան կազմակերպութեան վերաբերմամբ ասում են, որ Անգլիան, թէև անունով սահմանադրական միապետութիւն է, բայց իրօք հանրապետութիւն է, Ֆրանսիայի նման։

Ինչ վերաբերում է մեր եկեղեցուն, ապա եթէ սինոդի, առաջնորդների, յայտնորդների մասին եղած օրէնքներում ոչինչ չը փոխենք, այլ միայն այդ բոլոր պաշտօնեաները փոխանակ նշանակվելի և անկօնտրոլ լինելու, ընտրվի ու ժողովրդի առաջ պատասխանատու դառնան, արդէն այդ բոլոր հաստատութիւնների ոգին, կերպարանքը էապէս կը յեղաշրջվի ցանկալի ուղղութեամբ։ Եւ միևնոյն ժամանակ, ընդհանուր նոյն ընտրելիութիւնը, ժողովուրդը, եկեղեցական համայնքը տէր ու կարգադրիչ է դառնում եկեղեցու կառավարութեան և ազգիւր եկեղեցական իշխանութեան։

Ս. Տիգրանեան

(Կը շարունակվի)

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

VI

Գիւղացիական շրջաններում ընդհանրապէս, Դարաչիչագի գաւառամասում մասնաւորապէս, հողի կարիքից յետոյ առանձնապէս աչքի է ընկնում հարկերի ծանրութիւնը, որի բեռան տակ անքում է երկրագործ ժողովուրդը։ «Ո՞՝ր ես գնում տղայ»—հարցնում էք երիտասարդ, բայց հոգսերի ծանրութեան տակ մաշված ճամբորդին, որը քայլում է շալակած մի քանի օրվայ պաշարը։ «Քաղաք մշակութիւն սնելու և բերելու թագաւորական հարկը վճարելու»—լինում է նրա պատասխանը։ «Ինչու՞ես պարտք անում, բիձա»—դիմում էք որևէ գիւղական փողաւորի վաշխառուի դուռը բընված կանգնած մի ոսկրացած ծերունու։ «Հարկը պիտի տամ, տանուտէրը նեղում է»—պատասխանում է ծերունին։ «Ինչու՞ մալդ ծախում ես, մարդ»—դիմում էք մագարձի կամ չոգարի հետ սակարկութեան մտած գիւղացուն, որը վաճառում է իր աչքի լոյս եզը, կովը կամ ոչխարը։ Ի՞նչ անեմ, չը ծախեմ՝ խեղդում են հարկի համար»—լինում է վերջատամ պատասխան։ Ահա այսպիսի պատմական դարձուածքներ ընորոշում են այն ծանրութիւնը, որը կապված է հարկ կոչված տուրքի հետ։

Հարկ ասածը, գիւղական կեանքում, մի չարաբաստիկ բառ է, որի արտասանութեան հետ միաժամանակ պատկերանում է գիւղացուն թագաւորի հրամանը, տանուտէրի պլէսը, ծանր աշխատանքը, վաշխառուի թակարդը և վերջապէս իր աչքի լոյս եզան կամ կըթի կովի ականջից քոնել և բազար քաշել կիսագնով ծախելը։ Թագաւորի հարկը ուշացնել չի կարելի, ինչ պայմանով էլ որ լինի՝ պիտի ճարել, վճարել։ Նա թերևս այնքան էլ մեծ չէ, բայց նա ծանր է. չքաւոր, տնտեսապէս քայքայված գիւղացու համար, որը կուշտ փորով հաց չէ ուտում, որը կերամ կուրի երես չի տեսնում։ Հարկը շատ ծանր է, շատ ծանր երկու տեսակէտից, նախ՝ որ նա բարդվում է զանազան կողմնակի ծախքերով և երկրորդ՝ որ նա պահանջվում է անխնայ կերպով, յանախ պէտք ուժով։

Մանենք մի փոքր հարկահանութեան մանրամասնութիւնների մէջ։

Այժմ գլխաւոր գոյութիւն չունի, նա փոխարինվել է հողային տուրքով։ Պետ. գանձարանը մտնում է հարկը երկու անուան տակ, առաջինը «Государственная оброчная поземельная подать», երկրորդ՝ «Земскій сборъ»։ Դրանցից առաջինը գնում է ընդհանուր պետական մուտքի հաշիւն, իսկ երկրորդը տեղական մի շարք, ինչպէս և գիմնազի տարբերի պահպանութեան ծախքի համար։ Հարկը վերցնում է ոչ թէ հողերի քանակութեան չափով, այլ հողի արդիւնքի չափով. մի հող, անկախ իր տարածութիւնից, այնքան աւելի մեծ հարկ է վճարում, որքան նա արդիւնաւէտ է և ընդհակառակը։ Այնպէս որ մի գիւղ կարող է հողի մեծ տարածութիւն ունենալ, բայց քիչ հարկ վճարել, նայած այդ հողը որչափով արդիւնաւէտ է, թէև նոյն հողերը այնքան էլ չեն տարբերվում միմեանցից իրանց յատկութեամբ, հետևապէս արտադրութեամբ։ Ահա այս նպատակով է, որ հաշուած են իւրաքանչիւր գիւղի ունեցած հողերի տարածութիւնները և տեսակները (վարելահող, խոտահարք և արօտատեղի) առանձին առանձին և այդ հողերից ստացվող զուտ արդիւնքը։ Այսպէս մինչդեռ Քաղսի գիւղը ունի 2,760 դես. հող, որի արդիւնքը հաշուած է 13,485 բուբլի կամ իւրաքանչիւր դեսատինից արդիւնք 4 ր. 88 կ., Մաքրավանք գիւղը ունի 917 դես. հող, որի արդիւնքը հաշուած է 3,220 բուբլի կամ մի դեսատինից 3 ր. 51 կ.։ Հաշուելիս ի նկատ է առնվել և հողերի տեսակների համեմատական չափը և նրանց որակը։ Հարկահանութեան սիստեմը իրր համաձայն արդիւնքի է—подоходный—բայց ուր նա ծանրացած է խորհրդի անդամ Ղուկասեանի զեկավարութեամբ, առաջարկութիւն է արել կառավարութեանը, որպէս զի անդրկովկասեան արքունական երկրաչուզէն մասնակցի նաւթարդիւնաբերողների արտասահման կերօսին արտահանելուց ստացված օգուտներին երկաթուղին, Ղուկասեանի ծրագրով, պարտաւորվում է կերօսինը Բաքուից ձրի տանել մինչև Բաթում, իսկ դրա փոխարէն արտասահման կերօսին արտահանող նաւթային ֆիրմաների, նրա վաճառումից ստացված, զուտ օգուտը որոշ յարաբերական չափով բաժանվում է այդ ֆիրմաների և անդրկովկասեան երկաթուղու միջև։

—

Նոր ստացած գրքեր. ստացանք Հայ Աբսորակալի գրած «Առիւծին ժանիքէն» (բանաստեղծական յիշատակարան)։, հրատարակութիւն «Բազմիկ»-ի, տպած է Ֆիլիպէյում, գինն է 60 կոպէկ. 2) «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրի № 7։

—

Կիրակի օրը, յուլիսի 30-ին, նշանակված Պետական Դումայի նախկին անդամ Հերցենշտեյնի մահվան հոգեհանդիսաքը չը կայացաւ և կը կայանայ այսօր, օգոստոսի 1-ին, ցերեկվայ ժամը 2-ին Քաղվեթի ս. Գէորգ եկեղեցում։

—

Ինչպէս լսել է «Отголоски» լրագիրը, Ի-ին արական գիմն. վերատեսուչ Իվ. Եղ. Գամբրելիձէն չը համաձայնվեց Ի. Վ. Միկկելիչի առաջարկին՝ խնդիրքով հրաժարական տալու։

—

Զարկվիանների տպարանը, ուր տպվել է «Воля Народа» լրագիր առաջին համարը, փակել են, իսկ տպարանի կառավարիչ Զարկվիանին բանտարկված է։ «Կաւք.»

—

Թիֆլիսի 6-րդ քաղաքամասում գտնվող բոլոր բաղանիքների քիսայողները յուլիսի 27-ին գաղտագրին աշխատանքները, պահանջելով բաղանիքատէրերից վերադարձնել իրանցից վերցրած ընտրարանի վարձը (շաբաթական 1 բուբլի)։

—

Բաքուից մեզ հաղորդում են, որ այնտեղ ցերեկվայ մօտ ժամը 2-ին, երբ «Ստուկէն և ընկ.» առեւտր. տան արտադրիչը գործատատար Միխայել Մախարօբիձէի և 2 բանւորների ուղեկցութեամբ ձիաքարշով փող էր տանում Սև քաղաքի գործարանի բանւորներին հանդիպելու համար, Սև քաղաքի եկեղեցու մօտ, վագոնից իջնելիս, նրանց կանգնեցրին 5—6 զինված չարագործներ, որոնցից մէկը արաբշլէյեի աչքերին տաղ ածեց, իսկ մնացեալները խլեցին նրանցից 1200 բուբլի և փախան, ատրճանակ արձակելով իրանց եսուկից ընկնող ոստիկանի վրա։ Ոստիկանութեանը և մի քանի բանւորների աջողվել էր ձերբակալել բոլոր չարագործներին։ 1200 բուբլուց փողոցի վրա թափած հաւաքել են միայն 350 բուբլի, իսկ մնացած 850 բուբլին չի գտնված։

—

Մեզ հաղորդում են, որ յուլիսի 28-ին Թիֆլիսի գաւառի Նօրիօ գիւղի բնակիչ Ա. Մուխլիսաշվիլին գնալով իր համագիւղացի Մ. Ծօդաշվիլու տունը՝ սկսեց զնել իր տարձանակը, որով յանկարծակի կրակեց, որից վիրաւորվով Ծօդաշվիլու կինը փորից՝ վախճանվեց մի քանի ժամից յետոյ։

—

Զվիբիլուց մեզ գրում են, որ յուլիսի 19-ին քսան չարագործներ, թերդան հրացաններով և ատրճանակներով, յարձակվեց են Սակարակի տնկարանի վրա. նրանցից 7 ատաղակները մտել են տնկարանի կառավարչի բնակարանը և մահվան սպառնալիքով վերցրել են նրանից 600 բուբլի պետական գումարներից և 200 բուբլու իրեր։ Դեռևս մնացած ատաղակները զինաթափ արին գիշերապահին, խլելով բերդան հրացանը և ատրճանակը, որից յետոյ կողոպտողները անյայտացան։ Կողոպտողներից երկուսին ձերբակալել են։

—

Սեանակի գաւառից մեզ հաղորդում են, որ նոյն գաւառի Օնօգիա գիւղում չորս զինված անյայտ ատաղակներ յարձակվել են Լուկա Գարբունիայի բնակարանի վրա վերջինի բացակայութեան ժամանակ և, վերցնելով 500 բուբլու զանազան իրեր, անյայտացել են։

—

Շօրապանի գաւառից հաղորդում են, որ մօտ օրերս տասը հոգի զինված չարագործներ մտել են Շրօմա գիւղը և, տնից տուն մտնելով, կողոպտել են և վիրաւորել մի քանի բընակիչների, որից յետոյ չարագործները բաժանվել են 2 մասի և կողոպտել 2 թէ 3 խանութ։ Այդ բոլորը կատարելուց յետոյ չարագործները անյայտացել են, գողանալով ընդամենը մօտ 700 բուբլու իրեր։ Չարագործներից մէկը ձերբակալված է, իսկ մնացեալներին ձերբակալելու համար հատուկ միջոցներ են ձեռք առնված։

—

Ներկայումս ֆինանսների մինիստրը մշակում է բանւորներին անգործութեան դէմ ապահովագրելու նախագիծը։ Բոլոր անգործները, աչքի առաջ ունենալով այն, որ նրանք այժմ բանւորների մէջ մեծ տոկոս են կազմում, կը բաժանվեն զանազան մասերի. ֆիզիկապէս աշխատելու անընդունակներ, պատահաբար անգործ մնացածներ, հրդեհների, գործարանների փակման պատճառով բարձրացած տոկուսութիւն կորցնողները, գործադուլներին մասնակցողները և այլն։ Անգործութեան դէմ ապահովագրելու գործը մտադրութիւն կայ գլուխ բերել պետական խնայողական գանձարանների օգնութեամբ։

—

Առևտուրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը հաստատել է նոր կանոններ 1906 թ-ին Պետերբուրգի պօլիտեխնիկական ինստիտուտում ուսանողների ընդունելութեան համար։ Ներկայ տարին էլեքտրական-մեքենայական բաժանմունքում ընդունվելու են 64 հոգի, անտեսականում՝ 180, հաւաշինութեան բաժնում՝ 36 և մետաղագործական՝ 67 հոգի։ Տնտեսական մասում կընդունվեն նոյնպէս հոգևոր սեմինարիա վերջացնողներ։ Ինստիտուտի խորհուրդը, ի միջի այլոց, վճռել է ընդունել իրրև ուսանողներ իրական գիմնազիաների դասընթացը աւարտող կանանց

Բագուի նաւթարդիւնաբերողների մի խումբ, —подоходный—բայց ուր նա ծանրացած է խորհրդի անդամ

նոյնպէս, բայց առևտուրի մինիստրութիւնը այդ որոշումը չէ հաստատել։

—

Միտավայից հեռագրում են «Нов. Вр.»-ին, որ Բլուվստոկի գաւառում, գիւղացի Բոլդավեչիա, 115 տարեկան հասակում, դանակով կտրեց իր կոկորդը։ Նրան տարան հիւանդանոց։ Անձնասպանութիւն գործելու պատճառը նա բացատրել է նրանով, որ զզվել է այդքան երկար ապրելուց։

—

Պոդոլի նահանգի Մարաֆ գիւղում, Մոբոխովիչ ազգանունով մի մարդ կարդացել էր, թէ ինչպէս են եապոնացիները մշակում ցորենը, և թէ ինչպիսի բերք են ստանում նրանից։ Կամենալով համոզվել, թէ որքան եապոնացիների հողի մշակութեան ձևը գործադրելի է Ռուսաստանում և որքան ճեռնտու է հեռանկարների կողմից, Մոբոխովիչը 1905 թ-ի սեպտեմբերին անկեց (չը ցանեց) մի կտոր հողում, նախապէս եապոնացիների նման ձեռքով փխրունացնելով հողը, ընտիր հաճար, հատիկները իրարից 4 վերշոկ հեռաւորութեամբ։ Եւ ահա ինչ հետևանք ստացաւ։ Իւրաքանչիւր հատիկը, հաղորդում են Օդեսայի լրագիրները, տուեց 10—35 ցողուններ և, հասկանալի է, նոյնքան հասկեր։ վերջիններից իւրաքանչիւրի մէջ կար 30—40 հատիկ, այսինքն միջին բերք ստացվեց մէկին վեց հարիւր։ Գիւղացիներին աւելի հասկանալի կերպով համոզելու համար, մանաւանդ սակաւաթով գիւղացիներին, այդ ձևի մշակութեան առաւելութիւնը (հողի փխրունացնելու, ընտիր հատիկներ տնկելու իրարից 4 վերշոկ հեռու, բոլորը ձեռքով), Մոբոխովիչը ի ցոյց է դրել թփերը հողով միասին, որի մէջ նրանք արմատացել են, 6 համանքների մէջ, առաջարկելով գիւղացիներին և տանուտէրերին բացատրել գիւղացիներին, թէ ինչպէս են ստացվել այդ հրաշալիքները։ Եթէ այդ բանի վրա ուշադրութիւն դարձնէ թէկուզ 1 տոկոսը հողագործ ազգաբնակութեան սկզբներում, այդ մինչև այժմ չը փորձված մշակութեան ձևը բարերար ազդեցութիւն կունենայ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի։ Պետերբուրգի Հեռ. Գործ.՝ Սոլովիովի կաբինէտի մէջ մշակելու հասարակական գործիչների մերժման մասին առած լուրի առիթով կոմս Հէյդէնը մի նամակ է զետեղել «Нов. Вр.»-ում, որի մէջ, մասնաւորելով որ այդ լուրը ոչ լիովին կերպով է լուսաբանում իրերի դրութիւնը, հարկաւոր է համարում ճշմարտութիւնը վերականգնել։ «Մինիստրների խորհրդի նախագահը մի քանի տեսակցութիւն ունեցաւ Ն. Ն. Լվովի և Ա. Ի. Գուչկովի և լնձ հետ և խօսեց այն եղանակների մասին, որոնցով հասարակական գործիչներին կարելի է մոցնել մինիստրութեան կազմի մէջ։ Հէնց առաջին օրից ևեթ մենք յայտնեցինք, որ հասարակական գործիչներին մինիստրական 2 թափուր տեղեր տալ առաւել քան պատասաւոր է։ Պէտք է ամենասակաւը 5 հոգի լինեն և բոլորն էլ համախոհներ պիտի լինեն և ընդունեն այն ծրագիրը, որ մենք կազմել էինք։ Այդ ծրագիրը պէտք է հրատարակվի մինիստրութեան անունից, և նա հիմնաւոր կը համարվէր, և որի շուրջը մինիստրութեան մէջ մտնող հասարակական գործիչները, Դումայի ընտրութիւնների ժամանակ, կարող են կազմել միացեալ կուսակցութիւն։ Սկզբում այդ բանի դէմ սկզբունքով ոչ մի առարկութիւն չկաւ, և մենք միջոցներ ձեռք առանք հակվեցնելու այնպիսի անձանց, որոնց անունները երաշխաւորում էին՝ անյողդողդ մոցնելու մեր ծրագիրը։ Այդ անձերից մէկը հրաժարվեց հիւանդութեան պատճառով, և նախ քան մենք կարողացանք բանակցութիւններ սկսել մի ուրիշի հետ, մեզ յայտնեցին, որ սկզբում կարելի է ընդունել երկու մինիստրների միայն, իսկ հասարակական գործիչների յետագայ ընտրութիւնները լինելու են ատենաբար։ Ծրագրի ընդունելու և հրատարակելու հարցը պէտք է անկախ մնար այն պատճառով, որովհետև կառավարութիւնը վրձռել է բանակցութիւնները սկսել միայն երկու անձնաւորութիւնների հետ։ Ես, իբրև երրորդը, հարկաւոր և կարելի չը գտայ որևէ մասնակցութիւն ունենալ այդ բանում։ Կամբինացիան (դասաւորութիւն, միաւորութիւն) գժուարութեան հանդիպեց ոչ թէ մեր բարի կամքով, այլ որովհետև խորհրդի նախագահը չընդունեց մեր կարծիքները, և եթէ մեզ որևէ բան չաջողվեց, այդ այն պատճառով էր, որ կառավարութիւնը մեզ անել մինիստր-չինովնիկ չէր կամենում դարձնել։ Մեր հրաւէրի ամբողջ էութիւնը կայանում էր նրանում, որ մենք ընթանում էինք ոչ թէ իբրև չինովնիկներ, այլ իբրև հասարակական գործիչներ և սեփական ծրագրով»։

Խաղաղ վերածնութեան կուսակցութիւնը որոշել է իր շարքերը ընդունել որպէս անդամների սոսկ անձանվն անհատների, չընդունելով անդամութեան իրաւունքով ամբողջ կազմակերպութիւնների, խմբակների, լիգաների հայցն, որովհետև հոկտ. 17-ի դաշնակցութեան գրօշակի տակ համախմբված աւելի աջակողմեան համարված կուսակցութիւնները ընտրութիւնների ժամանակ դաշնակցութեան վաս հասցրին միայն։ Խաղաղ վերածնութեան կուսակցութիւնը մօտ օրերս կը հրատարակէ կուսակցութեան լիտերների Մոսկվայում կազմած կոչը, ուղղված ազգաբնակութեան, որով կուսակցութիւնը հրաւիրելու է միասնալ կուսակցութեան գրօշակի տակ բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք ձգտում են Ռուսաստանը վերածնել առանց բռնի յեղաշրջման։ Այդ կոչը այս անդամ ստորագրված կը լինի կոմս Հէյդէնի, Լը-վովի և Ստոլիպինի ազգանուններով։

30 յուլիսի

ՄԻՏԱՎԱ, 29 յուլիսի։ Զեմստվական դասարանը քննելով անարեկիչ (տերբօրիստ) Ցիրուլի, Բօդենֆելդի, Լաշզդենի և Կինինգալատի գործը՝ դատապարտեց առաջին երկուսին մահվան պատժի կախաղանի միջոցով, իսկ միւսներին 4-ամեայ աքսորի։

ԻԻԶՈՎԿՍ, 29 յուլիսի։ Տեղի են ունենում բանւորական մասնաղներ։ Նախկին պատգամաւոր Միխայլիչենկոյի ձերբակալութեան մասին լրագրային տեղեկութիւնները սխալ են։

ՄՈՍԿՎԱ, 29 յուլիսի։ Գործադուլի ամբողջ ժամանակ ձերբակալված են 150 ագիտատորներ, որոնք կաքսորվեն Մոսկվայից։ Զամօկվօրեչյում և Մեշչանսկի մասում գտնված ռումբերի երկու պահեստներն էլ գտանվում են ոստիկան-յեղափոխականներին։ Ալեքսանդրովսկի փողոցում բռնված յեղափոխական կոմիտէտը ոստիկան-յեղափոխականների գիւղացիական կազմակերպութիւնն է եղել։ Ձերբակալված է նրա լիդէր տիկին Եֆրօնը։

ՄՈՍԿՎԱ, 29 յուլիսի։ Վսէվէլատսկի գիւղում գտնվել է ընդհանուր զինուորական գաղտնակցութեան Մոսկվայի զօրաբանակի խորհրդի գաղտնի տպարանը, ուր տպվելիս են եղել թռուցիկներ՝ ուղղված նաւատորմղին և զօրքին։ Գտնված են երեք ռումբեր. ձերբակալված են 6 հոգի։

ԼՕՆԴՈՆ, 29 յուլիսի։ «Ստանդարդի» ասելով, Ռուսաստանի համար կառուցվող բացի «Витязь» զրահանաւից, այստեղ նոր մեքենաներ են պատրաստվում՝ ռուսաց մեծ զրահանաւի համար, «Դրեադնոուգ» նաւի նման։

ԲԵՐԼԻՆ, 29 յուլիսի։ Պաշտօնական շրջանները գոհ են ռուս նոր մինիստրներ նշանակելով, որովհետև Ռուսաստանը երաշխաւորել է, որ յեղափոխական շարժումը եռանդով ճնշելու է անպայման։ Բոլոր մինիստրներն էլ կողմնակից են բարենորոգումներին և գործելու են այդ ուղղութեամբ։ «Ֆօրվերտս» լրագիրը վերջին գործադուլը անաջող է համարում։

ՕԴԵՍՍԱ, 29 յուլիսի։ Մի քանի օր առաջ Բեսարաբից տեղ ժամանեց և իջևանեց «Պետերբուրգեան» կոչված հիւրանոցում գտնեալի դուստր Թամարա Պրինցը՝ Գօլոբէին անունով մի գիւղացու հետ։ Երէկ Պրինցը հաստատեցաւ, որ կընդունէ իրան տեղական զօրքերի ընդհանուր հրամանատար Կաուլբարսը և ուղղվեց դէպի պալատ։ Մի քանի քայլ առաջանալով, Պրինցի ձեռքից բեղկուլը վայր ընկաւ։ Լսվեց թեթև պայթում և տրտնջոց։ Երբեայ, որ բեղկուլում եղել է ռումբ։ Պրինցը շտապով յետ դարձաւ իր բնակարանը, ուր և ինքնասպանութիւն գործեց։ Նրա համարում գտնվել են 2 նամակ, որոնցից մէկի մէջ գրված է եղել, որ ինքը պատկանելիս է եղել սոցիալ-յեղափոխականների թռուցիկ խմբին և Կաուլբարսին սպանելու վիճակը իրան է ընկել։ Նրա հետ եկած գիւղացի Գօլոբկինը անյայտացել է։ Պալատում զոհաբանական մաղթանք կատարվեց։

ՍՏԱՎՐԱՊՕԼ, (Կովկասեան) (Սեփական թղթակից)։ Երէկ «Сѣверо-кавказскій Край» տպարանը ներս խուժեց 28 հոգուց բաղացած չարագործների մի խումբ, ձերբակալեց ծառայողներին և դրաշարներին և հարկադրեց տալ աշխատաւորների խմբակի, սոցիալ-դեմոկրատիական ֆրակցիայի և գիւղացիական դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի մանիֆէստը։ Մինչև երեկոյեան ժամը 8-ը տրվեց 15000 օրինակ, որ ատիճանաբար տարվեց տպարանից։ Ոչ ոք չէ ձերբակալված։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 29 յուլիսի։ Սվէաբորգի ապատամբութիւնը քննող զինուորական դատարանը երեկվանից սկսվեց իր գործունէութիւնը։ առաջին հերթում քննվեց 8 գլխաւորների գործը։ Պարզվեց, որ երկաթուղային գիծը փչացրել են կարմիր գվարդիայի մարդիկ, որոնք գործել են Կոկի հրանօթների համաձայն։ Կղզիներում ձերբակալել են Սվէաբորգից փախածներից մի քանիսին։

ՄՈՍԿՎԱ, 29 յուլիսի։ Խաղաղ վերածնութեան կուսակցութիւնը ընտրողներին դիմել է հետևեալ կոչով. «Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը չը յարվող Պետական Դումայի անդամների միջև ծագեց մի միտք, որ անհրաժեշտ է մնալով մի ընդհանուր ծրագրով, որպէսզի միացեալ կերպով կարելի լինի անցկացնել սեփական հայեացքները։ Հիմնական կէտն է լինելու՝ ստեղծել Ռուսաստանից սահմանագիր-միապետական պետութիւն։ միապետական ուժեղ իշխանութիւն, ժողովրդական ներկայացուցչութիւն, իրաւունքի վրա հիմնված ազատութիւն և բոլորի հաւասարութիւն օրէնքի առաջ,—ահա թէ որոնք են այն պայմանները, որ կը վերածենն Ռուսաստանը։ Գերագոյն իշխանութիւնը պէտք է ստեղծէ այժմ, օրինաչափ և կամայականութիւնից զերծ կառավարութիւն և անյողդողդ կեանք մոցնէ 1905 թ. հոկտ. 7-ի մանիֆեստով խոստացված ազատութիւնը։ Ամենագլխաւոր պայմաններից մէկը հանդիսանում է և Պետական Դումա օրինաւորութեամբ հրաւիրելը, կատարելագործելով օրէնքները նրա լիազօրութիւնների մէջ, մինիստրութեան պատասխանատուութիւն, որպէս օրէնսդրական և գործադիր իշխանութիւնների միութեան գրաւական։ Հողային հարցի վերաբերմամբ խմբակը անհրաժեշտ է համարել կանգ չառնել և բաւականանալ միայն հարկաւոր քանակով մանուռոր սեփականութեան հողերը պարտադիր գրաւելով։ Խմբակը թրջնամի է ամեն տեսակ բռնութեան և կամայականութեան, որտեղից էլ և ուղիից էլ որ գրանք լինեն։ Վերածնութիւնը կարելի է սոսկ վերակազմութեան ուղով, այլ ոչ թէ կամայականութեամբ, սպանութիւնով և կողոպտումով։ Ծրագիրը կարող է հող դառնալ միացնելու այն բոլոր անձանց, որ համակրում են վերոյիշեալ ուղղութեան։ Նա կը մշակվի մանրամասնօրէն կուսակցութեան առաջին նիստում։ Կոչը ստորագրել են Հէյդէնը, Լվովը և Ստախովիչը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի։ «Б. В.»-ի յուլ. 27-ի համարում հաղորդված էր, որ ներկայ տարում նորակոչների ընդունելութիւնը լինելու է սովորական ժամանակամիջոցից 1 ամիս ուշ։ Սրանով ներքին գործերի մինիստրութեան կից զինուորական ծառայութեան պարտականութիւններին վերաբերեալ գործերի վարչութիւնը յայտարարում է, որ այս տարի զինուորական ծառայութեան կոչելու ժամանակամիջոցը փոխելու մասին ոչ մի մտադրութիւն գոյութիւն չունի։

ՍԱՄԱՐԱ, 28 յուլիսի։ Բուգուլմում կողոպտված և ջարդուփշուր է արված Բօսպի կալուածքը։ Ժդանովկայում երբ թուրքերը կորում էին անտառները, ընդհարում տեղի ունեցաւ սարաժնիկների հետ։ Վօրօգովկա գիւղում մանգաղներով և փայտերով զինված գիւղացիների ամբոխը յարձակվեց՝ կողոպտված իրերը յետ խլելու նպատակով եկած պրիստաւի վրա։ Սարաժնիկները կրակեցին. 5 գիւղացի վիրաւորված են։

ՐԻԳԱ, 29 յուլիսի։ Ոստիկանութիւնը յուլիսի 18-ին երևան է հանել յեղափոխականների մի ժողով։ Բռնված են տանտիրուհին և 3 յեղափոխականներ։ Գտնված են կարևոր արձանագրութիւններ։

ՄՈՍԿՎԱ, 29 յուլիսի։ Ելեքտրաքարշի գործաթող փականագործները աշխատանքի չեն թողնում նոր բանւորներին։ Քաղաքային վարչութիւնը վճռել է արձակել բոլոր ծառայողներին և մոցնել ձիաքարշ։—Համազգամասային կազմակերպութեան համագումարը տեղի կունենայ Մոսկվայում, օգ. 20-ին։

ՀՌՕՄ, 29 յուլիսի։ Այսօր, առաւօտեան, Սան-Ռէմօում երկու բայրկեան ուժեղ երկրաշարժ զգացվեց, որը իրարանցում զցեց ամենուրեք։ Բօրդիգերում և Կօլտերօգում նոյնպէս ստորերկրեայ հարուածներ են զգացվել։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 29 յուլիսի, Սենատը մի հրամանագրով պատուիրել է բոլոր նահանգապետներին՝ ամենուրեք յայտարարել, որ կարմիր գվարդիան ոչնչացված է։ Հրամանագրի մէջ մատնանշված է, որ ամեն միջոց ձեռք կառնվի, գվարդիային, նոր կազմակերպութեան ժամանակ, հէնց սաղմում ճընշելու համար։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 29 յուլիսի։ Պարզվել է, որ նաւատորների մէջ յեղափոխական պրօպագանդա են մղել Ֆինն և ռուս ագիտատորները։ Առաջին օրում յեղափոխականներին զենկավարել է ռուս յեղափոխական։—Ապստամբութեան գործին մասն ունենալու համար դատապարտվող ֆինների գործի քննութիւնը նըշանակված է օգոստոսի 7-ին։ Բերդում ի կատար է ածված պոդպօրուչիկ Եմելիանովի, Կոխանովի և 5 զինուորների մահվան պատիժը։ Շնորհիւ ձեռք առած կարուկ և եռանդուն միջոցներին, բանւորների դաշնակցութեան ընդհանուր գործադուլ առաջացնելու բոլոր ջանքերը ի դերև եկան։ Երեկ բոլոր բանւորները աշխատանքի կգան. տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՄԱՐԳԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուէյա, Պօլոնսկոյի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՄԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վենէրական (սիֆիլիս) և մանուկ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ոչեաչ. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՌՏԻՏՍՈՒՆ—11—12 ժ. մարթու, վենէրակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՅՍՆԻՑ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հ.
Ի. Ֆ. ԳԶԵՆԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և նեարդային հ.
ԳԻՆԵԿՈՂՈՒ Ա. Ի. ԵՂԵՐԲԻՆԻՆ—1½—3 ժ. մանկական հիվանդութիւն և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղկահատ։
Ռ. Դ. ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հանձնարարվում է (գոհանալիս) և օգնության համար առանձին։
Հիւանդանոցի վիրաբոյժ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մասնաւոր մասնակցութեամբ։
Ելի զավէտինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Դ. ԱՂԱԶԱՆՆԵՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵՆՑ 11—12 ժ.—ղոյնի, ներքին և նեարդաբուժութիւն։
Գ. Ն. ԳԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ն. ԱԽԵՏԻՍԻՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՔՈՒՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԻՑԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնոզով, կատարվում միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանուտների (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ։ Օպերացիայի և համաձորդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժնումը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։
(Հ. ու. հ.) 79—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կազանսկայա փողոցի, տուն Թամամշևանի։ Մուտքը Կազանսկի փողոցից № 2.
(ա. օ.) 200—300

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօղեղ նօտար Մղեբրովի։ (Ե.հ.շ.) 33—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ցարսկիյ-Կալօդցայի հայ հասարակութեան համար հարկաւոր է մի
ՔԱՀԱՆԱՅ (Նորընծայ)
Ուսումն աւարտած լինի ճեմարանում կամ Ներսիսեան դպրոցում, որ կարողանայ բացի ժամակարգութիւնից դասեր ունենալ փոքր աշակերտների հետ հայերէն և ռուսերէն։ Պայմաններն իմանալու համար թող դիմեն Թիֆլիս, Միշին-Փողոցում, եղբ. Եարդուլեանցներին։
ու. ե. 3—7

Սաւուրջալի հայոց միդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ,
որը շաբաթական ունենալու է նաև հայոց լեզուի և թուաբանութեան 24 դաս։ Ռոճիկ 600 ր., բնակարան (երկու սենեակ), վառելիք, լուսաւորութիւն և ճանապարհածախս։
Դիմել՝ Ставрополь губ. священнику Сааку Теръ-Ованнесьянцъ. 1—3

Վարդուհի եւ Մարիրոս Նուռի
ԳԻՇԵՐՕԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ
օգոստոսի 20-ից ընդունվում են երկու սեռի աշակերտներ հանրամատչելի գներով։
Պայմանների մասին դիմել՝ Анапа, училищепансіонъ В. М. Шводъ. 1—4

Մեզ մօտ վաճառվում է
ԱՐԵԱՆ ԶԱՑՆԵՐ
(Երգարան գիրքը) գինը 60 կ.։
Դիմել՝ Баку О. Газанчяну, Бюро газетъ Молоканская противъ гост. «Кавказъ».
1—3

ԵՂԵՍԻԱՅԻ հայոց եկեղեցական-ծիսական միդասեան աղջկանց դպրոցի համար հարկաւոր են երկու ուսուցիչ. իւրաքանչիւրը շաբաթական պէտք է ունենայ 27 դաս. ուսուցիչներից մէկը պարապելու է ռուսաց լեզուից և միւս երկրորդական առարկաներից։ Տարեկան ռոճիկ ճանապարհածախսով իւրաքանչիւրին 360 ր., բնակարան, վառելիք և ծառայ։ Դիմել այս հասցէով. Черезъ гор. Моздокъ въ М. Эдисію, попечительству армянскаго училища.
1—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ - ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միքայէլեան փող. № 138 սեփ. տ.)
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին։ Պատրաստում են երեխաներին բոլոր ուսումնարանների համար, մինչև 5-րդ դասարանն։ (1, 13, 17, 20, 24, 27, 30) 1—7

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՋԱՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I պրակ. գինն է 8 կօպ.
Դիմել հայ գրավաճառներին։
6—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից Հայերէն
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Գինն է 8 ր., փառակալմ 9 ր., ճանապարհածախսով 10 ր., հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն։ Բաժանորդագրվին է 5 ր., առանձին բառարանս բաժանորդների համար 4 ր.։ Դրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագրվին է 2 ր. 50 կ.։
Դիմել ուղղակի հեղինակին հետևեալ պարզ հասցէով՝ Тифлисъ, лексикографу А. Дагбашяну. Անմամբ հեղինակի հետ տեսնվել կարելի է առաւօտեան ժամերին (Барятинская ул. № 6 кв. Германа).
(Կ. Ե. հ.) 6—6

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Գ. Ալթունեանի. ծխական դպրոցների համար.
ԳԻՆՆ է 60 կՕԳ.
Դիմել՝ Էջմիածին Ճեսարանի քարտուղար, պ. Քոչարեանին և Ալէքսանդրօպոլ հեղինակին։
6—10

„ՆՈՄԵՐՈ ՅԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կօպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՅՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս՝ Գուշչինսկի փողոցի վրա № 23, պրավոսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
Ալէքսանդր Յարութիւնով
(Հ. Կ. Ե.) 42—100

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆաքսիմիլ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր պրօմներ
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Դուտենդերդի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսայում՝ Զարեհ Մարգսեանի մօտ։
Ալբոմի հարը 1 ռուբ. 20 կօպ.։
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կօպ., ժանրային պատկերներ՝ հարը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ։ Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշուով են։
Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին։

Դերբենդի ուսումնարանի համար հարկաւոր է Մի ՎԱՐԺՈՒՀԻ
գիմնազիաւարտ։ ռուսաց լեզուի և ձեռագործի։ պէտք է գիտենայ լաւ հայերէն։ Դիմել՝ «Մշակ»-ի խմբագրատուն, Օրիորդին։
(Շ. Կ.) 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՋՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինսկայա փողոց № 8։ (Ե.ու.)92—100

Կարսի շրջանի Բէնգլի-Ահմեդ գիւղի ծխականների դպրոցի համար հարկաւոր են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. Թիմական դպրոց աւարտած, որոնք աւանդելու են բոլոր առարկաները ա. և բ. բաժանմունքներում. երգեցողութեան ուսուցիչը պէտք է երգէ և եկեղեցում (ասն օրերին) իր կազմած միաձայն խմբով. ռոճիկ տարեկան 400 ր. ամեն մէկին, նոյնպէս և բնակարան և վառելիք։ Դիմել՝ Карсъ, Мовсесу Согомонянцу։ (Շ.Ե.հ.) 2—3

Սամարդանդի հայոց երկսեռ ծխական դպրոցի համար հարկաւոր է ուսուցիչ (ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ)։ շաբաթական 24—26 դասով։ Ռոճիկ 720 ռուբլի, բնակարան և վառելիք. և Մի ՎԱՐԺՈՒՀԻ (գիմնազիաւարտ) շաբաթական 20—22 դասով. ռոճիկ միասին 500 ռուբլի։ Հասցէն՝ Самаркандъ, Николаевская ул. № 8. Попечительству Армянск. училища. (Շ. Ե. հ.) 2—4

ՂԱՐԱՍՈՒԲԱՋԱՐԻ
հայոց ուսումնարանի համար ՀԱՐԿԱՒՈՐ է մի փորձառու ուսուցիչ, որ կարողանայ եկեղեցու համար քառաձայն խումբ կազմել։ Գիշերաստութիւնը տրվում է Ներսիսեանաւարտներին։ Տարեկան 600 ռուբլի ռոճիկ, բնակարան, վառելիք և ծառայ։ Դիմել այս հասցէով՝ Карасубазаръ (Таврич. губ.) Попечительству Армянскаго училища. 5—5

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթևեկութիւնը)
(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօտային	Մարգասար.	Արաք.	Ալագեազ.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը	11 ժ. 03 ր. ցերը	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. երբ.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	3 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. երբ.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաղու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. գիշ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. երբ.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

„ՎԵՐՍԱԼ“
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենտրոնական մասում
Վօրոնցովի արձանի մօտ,
ուր շաղակվում են տրամվայի բոլոր գծերը։ Համարները սկսած 1 ռուբլուց և աւելի։ Ցարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով։ Բաղանիք, դուշ, տելէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ։ Օդի և լոյսի առատութիւն։ Կատարեալ մ